

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Եկաւ, Յանձնեց Ու Զեռացաւ

Առաջին անգամ ըլլալով Զայաստանի բարձրաստիճան մէկ պաշտօնեան բարձրաձայն ըսաւ այն ինչ, որ Զայ հասարակութեան մեծ մասին մօտ արդէն իսկ ձեւաւորուած կարծիք էր, ժամանակէ մը ի վեր:

ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը, յայտարարեց՝ «Երբ մենք ամբողջովին կախուած էինք Ռուսաստանից, Ռուսաստանը եկել, մեր ձեռքից վերցրել է Լեռնային Ղարաբաղը, վերադարձրել է Ատրպէյճանին, յետոյ ետ գնացել, սա է ամբողջ իրականութիւնը: Ես պնդում եմ՝ Ռուսաստանը վերցրել է Լեռնային Ղարաբաղը»:

Ռուսաստանի շարք մը կառավարական ներկայացուցիչներ փորձեցին հակադարձել Գրիգորեանի խօսքերուն անկապ ու անհասկանալի խօսքերով: Մին ըսաւ թէ այդ վիրաւորական է Զայ ժողովուրդին համար: Թէ այդ խօսքերը ի՞նչպէս կրնան վիրաւորել հայութիւնը, երբ ան իր աչքերով տեսաւ, այն ինչ որ տեղի ունեցաւ Արցախի ու Արցախահայութեան հետ ու զգաց բարեկամ ու դաշնակից երկրի լուռ մեղսակցութիւնը թշնամիին հետ:

Մէկ այլ Ռուս պաշտօնեայ ըսաւ, որ Գրիգորեանը պէտք է ծանօթանայ այս հարցին վերաբերեալ հայ քաղաքական գործիչներու յայտարարութիւններուն: Ո՞ր գործիչներու, ո՞ր յայտարարութիւններու մասին է խօսքը ոչ միայն յստակ չէ այլ իմաստազուրկ: Եթէ Մոսկուան ունէր պատասխան այդ պէտք է ներկայացուէր Զայ հանրութեան օրինակներով ու պատշաճ բացատրութիւններով, թէ ի՞նչ քայլեր առնուած են իրենց կողմէ՝ կանխելու համար Արցախի աղէտը:

Գրիգորեանի տուած գնահատականը հիմնուած է 2020 թուականի Նոյեմբերէն ետք տեղի ունեցած իրադարձութիւններու հերթականութեան վրայ: Ռուս խաղաղապահները ժամանեցին Լեռնային Ղարաբաղ պաշտպանելու համար տեղւոյն բնակչութիւնը եւ գործադրութեան ղեկու պատերազմի աւարտին գոյացած համաձայնութիւնները: Երբ Ատրպէյճանական զօրքերը սկսան խախտել զինադադարի սահմանները, ոչ մէկ քայլ առաւ վերականգնելու համար նախկին իրավիճակը, երբ «բնապահպանները» փակեցին ճանապարհը չփորձեց հեռացնել զանոնք ճամբու երթելու մասէն: Երբ Արցախահայութիւնը ենթարկ-

## Զայաստանը ԵՄ-ին Անդամակցելու Զամար Զանրաքուէ Պիտի Զկատարէ՝ Յայտարարեց Փաշինեան

«Ես Եւրոմիութեան ամպիրոնից յայտարարել եմ, որ Զայաստանը պատրաստ է ԵՄ-ին մօտ լինել այնքան, ինչքան ԵՄ-ն դա հնարաւոր կը համարի: Եթէ ես մտածէի, որ Զայաստանի ժողովուրդը այդ գաղափարին չի աջակցում, նման յայտարարութիւն չէի անի»:

Ժողովրդավարութեան հայկական համագումարին ժամանակ իր խօսքին մէջ այս մասին յայտնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ շարունակելով. «Հիմա խնդիրն ինչի՞ մէջ է՝ անել հանրաքուէ, որ պարզել ժողովրդի կարծիքը: Կը ներէք, ես որպէս պաշտօնեայ, որն իրաւասու է ներկայացնել ՀՀ ժողովրդին, գիտեմ ՀՀ ժողովրդի կարծիքը»:

Ան մանրամասնեց, որ եթէ հանրաքուէ կատարուի, նախ պէտք է քարոզարշաւ ըլլայ, որուն ժամանակ քաղաքացիները պիտի տան հարցումներ՝ ինչպէս, երբ, ինչ քայլերով, ԵՄ-ն կ'ուզէ՞, թէ՞ ոչ: «Մարդիկ հարցնելու են՝ ԵՄ-ն պատրաստ է մեզ ընդունել: Ես այդ հարցի պատասխանը չեմ կարող տալ, որովհետեւ ԵՄ-ի ներսում էլ ընթանում են գործընթացներ, ընտրութիւններ են տեղի ունենում, որոնց արդիւնքներն առնուազն հարցեր են առաջաց-



Վարչապետ Փաշինեան ելոյկ կ'ունենայ ժողովրդավարութեան Զայակական Զամագումարի ընթացքին

նում: Մենք ամենաբարձր մակարդակով յայտարարել ենք քաղաքական կամքի մասին», - նշեց վարչապետը:

Իր խօսքին մէջ վարչապետ Փաշինեան կարեւոր նկատեց նման համագումարներու կայացման կարեւորութիւնը. «Ինչո՞ւ է կարեւոր նման համագումարների եւ այս համագումարի անցկացումը, որովհետեւ ինչպէս իրաւացիօրէն նշուեց,

սա լաւ առիթ է քննարկելու Զայաստանում ժողովրդավարութեան եւ ժողովրդավարական բարեփո-

## Freedom House-ի Զեկոյցը ԼՂ-ի Մէջ Ատրպէյճանի Իրականացուցածը Միջազգային Յանցագործութիւն Կ'որակէ



Freedom House միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը «Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղին մէջ հայեր չկան» վերնագրով լայնածաւալ փաստահաւաք զեկոյց ներկայացուցած է, որուն մէջ մանրամասն կերպով ուսումնասիրութեան կ'առնուին Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները՝ սկսած 2020 թուականի երկրորդ զարաբաղեան պատերազմէն մինչեւ 2023 թուականի Սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի դէմ Ատրպէյճանի ռազ-

մական յարձակմամբ եւ անոր հետեւանքներով:

Զեկոյցը, մասնաւորապէս, կը ներառէ միջազգային փաստահաւաք առաքելութեան աշխատանքը՝ ներառեալ հարցազրոյցներ հարկւրաւոր վկաներու եւ բաց աղբիւրներու հետ, որ նպատակ ունի պատասխանել այն հարցումին, թէ ինչու 2024 թուականի Մայիսի դրութեամբ Լեռնային Ղարաբաղի մէջ այլեւս հայեր չկան:

## Զայաստանը Ստացած է ՆԱԹՕ-ի Գործընկերներու Զետ Զանդիպման Մասնակցելու Ուաշինկթընի Զրաւերը

Զայաստանը ստացած է Ուաշինկթընի մէջ ՆԱԹՕ-ի գազաթափօղովին՝ գործընկերներու ձեւաչափով միջոցառման եւ կազմակերպութեան 75-ամեակին նուիրուած յարակից միջոցառումներուն մասնակցելու հրաւէր եւ հաստատած է մասնակցութիւնը, «Ազատութեան» յայտնեց ԱԳՆ խօսնակ Անի Բաղալեանը:

Այդ հաւաքին հրաւիրուած է նաեւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարը, Պաքուի մէջ յայտնած է ԱՄՆ պետական քարտուղարի տեղակալ ձէյմզ Օ'պրայլընը:

Հնարաւոր է արդեօք, որ Ուաշինկթընի մէջ հայ-ատրպէյճանական բանակցութիւն տեղի ունենայ, դեռ պարզ չէ: Արտաքին գործերու նախարարութենէն նշած են, որ այս պահին այլ պայմանաւորուածութիւն չկայ:

Նախօրէին ատրպէյճանական «Թուրան»ը, իր աղբիւրներուն յոյսով ընելով գրած էր, թէ Պաշտօնի վարչակազմը կը ծրագրէ երեւանն ու Պաքուն հրաւիրել Յուլիս 9-11-ին կայանալիք ՆԱԹՕ-ի գազաթափօղովի շրջանակներուն մէջ գործընկերներու հաւաքին, նաեւ՝ խաղաղութեան պայմանագիրը ամբողջացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչու Մարեց «Արբազան Շոուն», եւ Երբ Յեղափոխութեան Ֆենոմենը

ՅԵՂԻՆԵ ՄԱՍՈՒԿԵԱՆ

«Արբազան Շարժումը», աւելի ճիշտ՝ «Արբազան Շոուն», չկարողանալով հասնել իր առջեւ դրուած նպատակին՝ կառավարութեան եւ դրա ղեկավարի հրաժարական, յայտարարել է իբրեւ թէ «թայմ աութ» վերցնելու՝ ինքնամաքման ու վերակազմակերպման փուլ մտնելու մասին՝ մինչեւ կը գայ փողոցային պայքարի հերթական սեզոնն ու... ինչպէս յայտնի երգում է հնչում՝ «վաղն ամէն ինչ կը սկսուի նորից»:

Ակնյայտ է, սակայն, որ ընդդիմութիւնն այսպիսով փորձում է «կուլտուրական» ձեւակերպում տալ կօնսրյեղափոխութեան հերթական ձախողմանը, որը, նկատենք, երրորդն է 44-օրեայ պատերազմից յետոյ (նախքան 44-օրեայ պատերազմը տեղի ունեցած փորձը նոյնպէս չմոռանանք):

Մինչդեռ անկեղծութիւն ունենալու դէպքում շարժման կազմակոմիտէն ներողութիւն կը խնդրէր իր աջակիցներէրից՝ նրանց հերթական անգամ իբրեւ ռեւանշի գործիք օգտագործելու եւ հիասթափեցնելու համար, կ'ազդարարէր փողոցը հանգիստ թողնելու եւ աջատեղ այլեւս չվերադառնալու:

մասին՝ մինչեւ գալիք համապետական ընտրութիւնները մեկնարկը:

Եթէ շարժման վերակազմակերպումը ենթադրուի է 2026-ի համապետական ընտրութիւններին նախապատրաստուելուն միտուած աշխատանք, ապա պէտք է միայն ողջունել նման գործելակերպը, քանի որ, ինչպէս յայտնի կանոնն է յուշում, գալիք ընտրութիւններին պէտք է պատրաստուել վերջին ընտրութիւնների յաջորդ օրուանից: Ժամանակ, իրօք, քիչ է մնացել:

Այժմ փորձենք վերլուծել փողոցային հերթական այս պայքարի ֆիւսիլի պատճառները (կամ գուցէ խորքային պատճառը): Սովորաբար դրանք մատնանշելիս ուշադրութիւն է դարձնում շարժման արտաքին՝ վանող, արգահատանք առաջացնող փաթեթաւորման վրայ՝ սկսած լիտերի կամ ստուերային շահառուի (երկրորդ նախագահ) բացասական ռեյտինգից մինչեւ շարժման վիճահարոյց, ընդհուպ՝ ֆաշիստական լոզունգներ:

Կոնկրետ այս դէպքում մատնանշում էր Վազգէն (Բագրատ) Գալստանեանի՝ ապաքաղաքական կերպար, վարչապետի խոցելի թեկնածու լինելը, ինչպէս նաեւ նրա արած մի շարք դէստրուկտիւ յայտարարութիւններն ու գործողութիւնները:

Յնարաւոր Կը Լինի Կրկնել 2018-ի

թիւնները: Ձախողման գլխաւոր պատճառը, մինչդեռ, շարժման նկատմամբ հանրային վերաբերմունքն է, այսպէս ասած՝ ռեֆլեքսային արձագանքը արտաքին միջավայրից ստացած «գրգիռներին»:

Այս շարժումն էլ շարժանագաւ հանրային աղեկուատ աջակցութեան, որքան էլ դրա կազմակերպիչները փորձեցին գրգռել հանրային ուշադրութիւնը Տաւուշում տեղի ունեցող սահմանազատման գործընթացի ուղղութեամբ եւ այն կասեցնելու նպատակով էլ Կիրանցից քայլերով հասան Երեւան: Պարզուեց, սակայն, որ մայրաքաղաք հասնելուն պէս օրակարգի խեղաթիւրում տեղի ունեցաւ՝ սահմանազատման գործընթացի կասեցումը սահուն կերպով վերածեց վարչապետին ուղղուած ծիծաղաշարժ հաթիւթների՝ «հրաժարական տուր, թէ չէ...» (շարժման կազմակոմիտէին, թերեւս, պէտք է յորդորել քաղաքականութիւնը չշփոթել «գայլն ու գառը» առակի սիւժէի հետ):

Այն, որ շարժումը չստացաւ հանրային լայն աջակցութիւն, չի նշանակում, որ մեր երկրում բոլորն են հաշտ տեղի ունեցող պրոցեսների հետ եւ/կամ չկայ իշխանութիւնից հիասթափուածների,

այսպէս ասած, բողոքական զանգուած: Անշուշտ, կայ, եւ անհեռատեսութիւն կը լինի այդ փաստի հետ հաշուի չնստելը: Սակայն փորձը ցոյց է տալիս, որ փողոցային տարատեսակ շարժումներով իշխանութիւն փոխելու մեխանիզմն այլեւս ՀՀ-ում չունի հանրային աջակցութիւն:

2018-ի յեղափոխութիւնը (որի հնարքներն ու գործիքները կրկնօրինակելով՝ ընդդիմադիր շարժումների կազմակերպիչներին թուում է, թէ կը ստանան նոյն էֆեկտը՝ իշխանութեան հրաժարական) ՀՀ քաղաքացիներին է վերադարձրել տասնամեակներ շարունակ իրենից խլուած՝ ընտրելու եւ ընտրութեան չկեղծուած արդիւնքներով իշխանութիւն ձեւաւորելու սահմանադրական գործիքը: 2018-ին մարդիկ փողոց էին դուրս եկել, ճանապարհներ էին փակուած, քանի որ կտրուել էր կապը իշխանութիւնը գաւթածների եւ իշխանութիւնը կրողի՝ ժողովրդի միջեւ: Թաւաշայ յեղափոխութիւնը ապաշրջափակեց այդ ճանապարհը, վերականգնեց խցանուած կապը, ժողովուրդն էլ յստակ գիտակցեց՝ երկրում իշխանութիւն փոխելու համար այլեւս կարիք չկայ փողոցներն օգտագործել: Դրանք պէտք է օգտագործել՝ ըստ նշանակութեան, կառուցել նորերը:

2018-ի ֆենոմենը գուցէ հնարաւոր լինի կրկնել այն դէպքում, երբ վերադառնան նախկին ռեժի-

Թուրքական «Գամբիտը» Զի Ստացում. Կովկասեան Պատերազմ

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆՍԵԱՆ

Anadolu յայտնում է, որ Թուրքիայի իշխող եւ գլխաւոր ընդդիմադիր կուսակցութեան «պատմական հաշտութիւնը կասկածի տակ է»: «Նախագահ էրտողանի եւ ԺՀԿ առաջնորդ Օզեւլի հանդիպումից յետոյ, որի ընթացքում նրանք նախնական համաձայնութեան էին եկել 21-րդ դարի Թուրքիայի սահմանադրութեան հարցում, քեմալականների նախկին առաջնորդ Քըլըչդարօղլուն յայտարարել է, որ «իշխանական պալատների հետ չեն պայմանաւորուում, նրանց դէմ պայքարում են»: Ըստ տեղեկութիւնների, «Իշխող կուսակցութեան հետ համագործակցութեանը» դէմ է արտայայտուել նաեւ «Ստամպուլի քաղաքապետ իմամօղլուն»:

Ի պատասխան՝ էրտողանը յայտարարել է, որ անխախտ է մնում իշխող եւ ծայրայեղ ազգայնական կուսակցութեան դաշինքը: Այս ամէնը տեղի է ունենում Ուաշինգտոնում ՆԱԹՕ-ի գազաթափողովից մէկ շաբաթ առաջ: Ուրբանական պատերազմի մասին խօսելով՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ֆիդանն ասել է, որ առանց Ռուսաստանի մասնակցութեան հնարաւոր չէ հասնել որեւէ համաձայնութեան: Ենթադրուում է, որ ՆԱԹՕ-ի գազաթափողովի շրջանակներում դաշինքի անդամ քսան պետութիւն Ուրբանիայի հետ անվտանգութեան երկկողմ համաձայնագիր կը ստորագրի: Թուրքիան, հաւանաբար, նրանց շարքում չի լինի, թէեւ Ուրբանիայում ԱԹՍ արտադրութիւն է հիմնադրում:

Այս ֆօնին Ռուսաստանը եւ Թուրքիան, ինչպէս նաեւ Իրանը, տարածաշրջանային խաղացողներին շատ աւելին կարող են առաջարկել ռազմական եւ տնտեսական

քիչ ռեսուրսներով հաստատելու համար, որպէսզի Հարաւային Կովկասում ազդեցութեան խնդիրը լուծուի: Մգիմօ-ի միջազգային ուսումնասիրութիւնների ինստիտուտի առաջատար աշխատակից Սիլաեւի համար այսպէս յայտնեց համալիր է այն, որ այս տարածաշրջանային խաղացողները աւելի շատ գործելիութեան համար:

Աւելի բացայայտ է արտայայտուել քաղաքագէտ Մարկարինը: Որի կարծիքով՝ «ամն-ը չի կարող Ատրպէյճանին պարտադրել, որ Հայաստանի հետ իր համար աւելի պակաս նպաստաւոր պայմաններով պայմանագիր ստորագրի»: Այդպիսին, հասկացում է, որ փոխպետքարտուղար Օպրայեանի Պաքու այցին յաջորդել են ռուսատրպէյճանական բաւական բարձր մակարդակի ոչ հրապարակային շփումներ, եւ Մոսկուան Ալիեւին երաշխաւորել է հայատրպէյճանական պայմանագրի՝ Ատրպէյճանի համար աւելի ձեռնտու պայմաններ:

Իրավիճակին յաւելեալ բարդութիւններ են բերում Ֆրանսայի խորհրդարանական եւ Իրանի նախագահական ընտրութիւնները: Կորցնելով խորհրդարանական մեծամասնութիւնը, Ֆրանսայի նախագահը, ինչպէս որ ընդունուած է ասել, վերածուում է «կաղ բաղիկի»: Իսկ Իրանում, Մասուդ Փեզեշքեանի քաղաքական ֆուրորն, անկասկած, Թեհրանի ներքին եւ արտաքին քաղաքականութեան սկզբունքային վերանայումներ է պարտադրելու, նոյնիսկ թէ պահպանողականները միաւորուեն, եւ

Սաիդ Ջալալին նախագահ ընտրուի:

Կարելի է կասկածել, որ Ատրպէյճանի արտաքին գործերի նախարարը կը մեկնի Ուաշինգթոն, բայց եթէ անգամ Բայրամով մասնակցի ՆԱԹՕ-ի գործընկեր երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդաժողովին, ապա հազիւ թէ այդ շրջանակներում հանդիպի Արարատ Միրզոյեանին՝ «քննարկելու խաղաղութեան համաձայնագրի հասնելու ջանքերը», ինչպէս ակնկալում են ԱՄՆ պետական ղեկավարամենտում: Պաքուն փաստացի մերժել է ամերիկեան պայմաններով Կեդրոնական Ասիա-Ատրպէյճան-Հայաստան-Թուրքիա հաղորդակցութեան նախագիծը:

Շանհայի համագործակցութեան կազմակերպութեան գազաթափողովի շրջանակներում Չինաստանի առաջնորդ Սի Մինիինը երկու պետական այց է ծրագրել Ղազախստան եւ Տաճիկստան: Մինչ այդ Ղազախստան պետական այց է կատարել Հարաւային Քորիայի նախագահը, իսկ աւելի վաղ Աստանայ է այցելել Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար, նախկին վարչապետ Քեմերոնը: Հարաւային Կովկասի, իսկ աւելի կոնկրետ Հայաստանի շուրջ «պայթուցիկ միջավայր» է ձեւաւորուում: Այս իրավիճակն Ատրպէյճանը փորձելու է իրացնել կամ բանակցութիւններով իր համար աւելի նպաստաւոր պայմանների հասնելու, կամ վերածուելու է կովկասեան պատերազմի դէտոնատորի:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնի հոն արտայայտուող բոլոր տեսակետները

Շաբ.ը էջ 15

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
ՊԵՏՏՆԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

ԵՆԽՎ-Ը Բարձր Գնահատած է Հայաստանի Մեջ Ոստիկանութեան Ոլորտի Բարեփոխումներուն Գործընթացը



Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովը քուէարկութեամբ ընդունած է «Հայաստանի կողմէ ստանձնած պարտաւորութիւններու եւ յանձնառութիւններու կատարման մասին» բանաձեւը:

ՀՀ Ներքին գործերու նախարարութեանն էլ յայտնած են, որ Վեհաժողովը բարձր գնահատած է ժողովրդավարական զարգացման ուղղուած Հայաստանի շարունակական յանձնառութիւնը:

Բանաձեւին մէջ ընդգծուած է, որ, չնայած անվտանգային մարտահրաշարներուն եւ բարդ միջազգային միջավայրին, Հայաստանը կը շարունակէ բարեփոխումներու

յաւակնոտ օրակարգը:

Վեհաժողովը բարձր գնահատած է նաեւ համակարգային փոփոխութեան դէմ պայքարելու հարցով իշխանութիւններուն ցուցաբերած վճռականութիւնը, ինչի վկայումս են նաեւ ոստիկանութեան ոլորտի բարեփոխումները:

Բանաձեւին մէջ կը նշուի, որ Վեհաժողովը հետեւողական պիտի ըլլայ Եւրոպայի Խորհուրդին կողմէ Հայաստանի մէջ իրականացուող գործողութիւններու 2023-2026 թուականներու ծրագրին բխող համագործակցութեան նկատմամբ, որու շրջանակին մէջ կը կարելորոնին նաեւ արդարադատութեան համակարգին բարեփոխումները:

Ծառուկեանի Աղջիկէն Եւ Փեսայէն Պիտի Բռնագանձուի Շուրջ Երեք Միլիոն Տոլար



Փագիկ Ծառուկեանի փեսան ու աղջիկը

Հակափտածութեան դատարանին վճիռով կը նախատեսուի Գագիկ Ծառուկեանի աղջիկէն եւ փեսայէն յօգուտ Հայաստանի բռնագանձել աւելի քան 1 միլիոն 286 միլիոն դրամ (շուրջ երեք միլիոն տոլար), 264 հազար ԱՄՆ տոլարի պահանջի իրաւունք, 2 անշարժ գոյք, բաժնեմասեր:


Հակափտածութեան դատարանի՝ ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման պահանջով երկրորդ վճիռը Հակափտածութեան դատարանը՝ նախագահութեամբ դատաւոր Նարինէ Աւագեանի, Կոտայքի նախկին մարզպետ, Աբովյանի նախկին քաղաքապետ Կարա-

պետ Գուրոյեանէն եւ նրա կնոջմէ՝ Ռոզա Ծառուկեանէն, յօգուտ Հայաստանի՝ կը նախատեսէ բռնագանձել Կոտայքի մարզի Առինջ գիւղին մէջ գտնուող 1 անշարժ գոյքի 9177/10.000 մասը, Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Տանձաղբիւրի փողոցի 29/2 հողամասը ամբողջութեամբ, «Ակբա ԲԱՆԿ» ԲԲ ընկերութեան 2000 հատ բաժնետոմսեր, տրամադրուած փոխառութեան չվերադարձուած մասի՝ 264.000 ԱՄՆ տոլարի պահանջի իրաւունքը, Կարապետ Գուրոյեանէն յօգուտ Հայաստանի պիտի բռնագանձուի նաեւ 1.286.545.113 ՀՀ դրամ:

Մինչ Օրս Ապօրինի Գոյքի Բռնագանձման Գործերով ՀՀ-ին Փոխանցուած Է 7 Անշարժ, 1 Շարժական Գոյք, Շուրջ 687 Միլիոն Դրամ

Գլխաւոր Դատախազութեան Ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութեան ձեւաւորումէն ի վեր՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները կը սպասեն արդիւնքներու, որոնք այսօր սկսած են նշմարուիլ:

ՀՀ Դատախազութեան 106-ամեակին եւ Դատախազութեան աշխատակիցի օրուան նուիրուած հանդիսաւոր նիստին այս մասին ըսած է գլխաւոր դատախազ Աննա Վարդապետեանը՝ խօսելով փտածութեան դէմ պայքարի մասին:



ՀՀ գլխաւոր դատախազ Աննա Վարդապետեան

«Օրեր առաջ՝ Յունիսի 20-ին, կայացուեց ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վերաբերեալ առաջին դատական արձանագրութիւնը, որով Հակափտածութեան դատարանը վճռեց «Հիւսիս-հարաւ ճանապարհային միջանցք» ծրագրի «Թրանշ 1» եւ «Թրանշ 2» հատուածների կապալառու՝ սպանական «Կորսան Կորվիամ Կոնսորցիոն» ընկերութեան հայաստանեան մասնաճիւղի ենթակապալառու «Պոլի-տրանսպորտ» ՍՊ ընկերութեան բաժնետէր Գէորգ Վարդանեանից յօգուտ Հայաստանի Հանրապետութեան բռնագանձել 1 միւլիոն անշարժ գոյք Երեւան քաղաքի Վահագնի թաղամասում (միջին շուկայական արժէքը կազմում է 157 միլիոն դրամ), 2 փոխարարմիջոց, 2 իրաւաբանական անձերի մէջ մասնակցութիւն, 10 միլիոն դրամի փոխառութեան պահանջի իրաւունք, ինչպէս նաեւ մօտ 17 միլիոն դրամ՝ որպէս ապօրինի դրամական միջոցների մնացորդ եւ բարեխիղճ երրորդ անձին փոխանցուած կամ չնոյնականացուած դրամական միջոց», - ըսած է Վարդապետեանը:

Գլխաւոր դատախազին խօսքով՝ 14 հայցադիմումներով կ'ընթանայ բուն դատաքննութիւնը:

«Ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման ոլորտում Գլխաւոր դատախազութեան կողմից այսօր դատարան է ներկայացուել 108 հայցադիմում, որոնցով պահանջուում է յօգուտ Հայաստանի Հանրապետութեան բռնագանձել ապօրինի ծագում ունեցող աւելի քան 1150 անշարժ եւ 225 շարժական գոյք, ինչպէս նաեւ շուրջ 305 իրաւաբանական անձանցում մասնակցութիւնը:

«Մինչ օրս ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման ոլորտում կ'ընթան Կաշտութեան համաձայնութիւններով՝ Հայաստանի սեփականութեանն է փոխանցուել 7 անշարժ եւ 1 շարժական գոյք, ինչպէս նաեւ շուրջ 687 միլիոն դրամ», - եզրափակած է Վարդապետեանը:

«Ներկայացուած հայցադիմումների ընդհանուր հայցազինը դրամային արտայայտութեամբ գերազանցում է 560 միլիոն դրամը: Հայցազինի մէջ ներառուած չեն իրաւաբանական անձանցում մասնակցութիւնների, ինչպէս նաեւ մի շարք այլ գոյքերի շուկայական արժէքները:

Արման Սահակեան Ինքզինք Մեղաւոր Ծանցած Է՝ Ամբողջութեամբ Վերականգնելով Պետութեան Պատճառած Վնասը

Նախկին բարձրաստիճան պաշտօնատար անձի գործողութիւններու հետեւանքով պետութեան պատճառուած շուրջ 178 միլիոն ՀՀ դրամի վնասը ամբողջութեամբ վերականգնուած է. քրէական վարչութիւնը նախաքննութիւնը աւարտած է:

ՀՀ Հակափտածութեան կոմիտէին հաղորդմամբ, նախաքննութեամբ պարզուած է, որ ՀՀ ԿԱ Պետական գոյքի կառավարման վարչութեան պետի պաշտօնը զբաղեցուցած Արման Սահակեանը, չարաշահելով իր պաշտօնական լիազօրութիւնները, շուրջ 178 միլիոն ՀՀ դրամ շուկայական արժէքով պետական անշարժ գոյքը օրէնքով սահմանուած կարգի խախտմամբ օտարած է իր հետ փոխկապակցուած անձերու անուամբ հիմնադրուած կազմակերպութեան:

Ա. Ս.-ն չիշեալ անշարժ գոյքը օրէնքով սահմանուած կարգի խախտմամբ՝ ուղղակի վաճառքով, օտարած է իր հետ փոխկապակց-



Նախկին բարձրաստիճան պաշտօնեայ՝ Արման Սահակեան

ուած անձերու անուամբ հիմնադրուած կազմակերպութեան, ինչի հետեւանքով պետութեան պատկանող առանձնապէս խոշոր չափերու՝

# ԼՈՒՐԵՐ

## Միրզոյեանը Պորելի Յետ Հանդիպման Ընթացքին Ընդգծած Է Խաղաղութեան Պայմանագրի Կնքման Անհրաժեշտութիւնը



Արարատ Միրզոյեան Եւրոպական յանձնաժողովի փոխնախագահ Ժոզեփ Պորել խորհրդակցութեան ընթացքին

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան Եւրոպական յանձնաժողովի փոխնախագահ Ժոզեփ Պորելի հետ հանդիպման ընթացքին ընդգծած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի կնքման անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ տարածաշրջանին մէջ իրական կայունութեամբ շահագրգռուած գործընկերներու արժէքահեն մօտեցումները նշանակութիւնը:

Միրզոյեանն ու Պորելը միտքեր փոխանակած են միջազգային ու տարածաշրջանային անվտանգութեան առնչուող հարցերու շուրջ: Ընդգծուած է ուժի կիրառման միջոցով խնդիրներու կարգաւորման գործելակերպի համընդհանուր բացասական հետեւանքները եւ միջազգային իրաւունքի հիմ-

նարար սկզբունքներու յարգման անհրաժեշտութիւնը:

Անոնք քննարկած են ՀՀ-ԵՄ գործընկերութեան օրակարգային հարցեր, յարաբերութիւններու հակա խորացման միտումը քայլերն ու դրական հեռանկարները: Ընդգծուած է առկայ մեխանիզմներու արդիւնաւէտ կիրառման միջոցով ՀՀ դիմակայունութեան ամրապնդման, մոտաքի արտօնագրերու ազատականացման շուրջ երկխօսութեան մեկնարկի կարեւորութիւնը:

Տուարովի քի հասմ գումարի մեկնարկի պաշտօնական ընդունելութեան համար Խրուաթիա գտնուող արտաքին գործերու նախարարը Եւրոպական յանձնաժողովի փոխնախագահին հետ անդրադարձած էր ՀՀ-ԵՄ օրակարգին եւ տարածաշրջանային վերջին զարգացումներուն:

## Սպառազինուած Բանակ Ունենալը Որեւէ Երկրի Իրաւունքն Է. Եւ Պատգամաւորներուն Յայտարարութիւնը՝ Կապուած Յայաստանի Յետ

Եւրոպական խորհրդարանի խմբակցութիւններէն խումբ մը պատգամաւորներ հանդէս եկած են համատեղ յայտարարութեամբ՝ ի պատասխան հայ-ֆրանսական ռազմական համագործակցութեան վերաբերեալ Ատրպէյճանի եւ Ռուսաստանի քննադատութիւններուն, բացասական արձագանգին եւ սպառնալիքներուն:

Պատգամաւորները իրենց յայտարարութեամբ շեշտադրած են, որ մարտունակ եւ ժամանակակից զինուորական սարքերով սպառազինուած բանակ ունենալը որեւէ երկրի ինքնիշխան իրաւունքն է:

Եւրոպական խորհրդարանի պատգամաւորները նշած են, որ «Ռուսաստանի եւ Ատրպէյճանի վարչակարգերուն կողմէ Հայաստանի հասցէին հնչեցուած մեղադրանքները, թէ վերջինը Հարաւային Կովկասի մէջ հակամարտութիւն կը հրահրէ, եւս մէկ անգամ կը փաստէ, որ երկու երկիրներուն միջեւ առկայ է դաւադրութիւն, որ 2023 թուականի Սեպտեմբերին յանգեցուցած էր Լեռնային Ղարաբաղի աւելի քան 140 հազար հայերու ցեղային գտման»:

Եւրոխորհրդարանականները զարմանք յայտնած են, որ

մենատիրական եւ նախադրձակ երկիրները, ինչպիսիք են՝ Ատրպէյճանը եւ Ռուսաստանը, կը դատապարտեն ԵՄ անդամ երկիր Ֆրանսան՝ ձգտելով օգտագործել առկայ տարածայնութիւնները, հակասութիւնները երկիրներուն ներսը կամ երկիրներուն միջեւ՝ որպէս սեփական պատեհապաշտ նպատակներուն հասնելու գործիք:

«Սա որեւէ կերպ չի կրնար ընդունելի ըլլալ Եւրոմիութեան կողմէ, եւ վաղուց ժամանակն է պատժամիջոցներ կիրառել բռնապետական Ալիեւի վարչակարգին դէմ՝ տարածաշրջանային խաղաղութիւնն ու անվտանգութիւնը խաթարող անոր ապակառուցողական գործողութիւններուն եւ մարդու իրաւունքներու ոտնահարման համար: Մենք խստօրէն կը դատապարտենք Պաքուի եւ Մոսկուայի պաշտօնական յայտարարութիւնները եւ կոչ կ'ընենք Եւրոպական Յանձնաժողովին եւ ԱԳԵՄ-ին անյապաղ արձագանգելու այս իրավիճակին», - ըսուած է համատեղ յայտարարութեան մէջ:

## Freedom House-ի Ձեկոյցները Եւս Կարեւոր Ազդակ Կը Յաղորդեն Կառավարութեան՝ Կարչապետ Փաշինեանը Մարք Պեհրեմտօին



Փաշինեան կ'ընդունի Freedom House-ի ղեկավարներն Մարք Պեհրեմտօն

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Freedom House միջազգային իրաւապաշտպան կազմակերպութեան Եւրոպայի եւ Եւրասիոյ ծրագրերու տնօրէն Մարք Պեհրեմտօնը:

Վարչապետը կարեւորած է ՀՀ կառավարութեան եւ քաղաքացիական հասարակութեան միջեւ համագործակցութիւնն ու երկխօսութիւնը, ինչ որ կը նպաստէ տարբեր ոլորտներու մէջ ժողովրդավարական բարեփոխումներու արդիւնաւէտ իրականացման: Նիկոլ Փաշինեան նշած է, որ Freedom House-ի ղեկոյցները եւս կարեւոր ազդակ կը հաղորդեն կառավարութեան՝ բարեկարգում-

ները յառաջ մղելու գործին մէջ:

Վարչապետը շեշտած է, որ ժողովրդավարական հիմնարկներու գարգացումն ու բարեփոխումներու օրակարգը կառավարութեան համար ռազմավարութիւն են:

Զրուցակիցները քննարկած են փութումներու դէմ պայքարի, խօսքի ազատութեան, դատական համակարգի անկախութեան ապահովման եւ այլ ուղղութիւններով իրականացուող բարեփոխումներուն, Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած անձերու խնդիրներու եւ անոնց լուծման ուղղութեամբ ՀՀ կառավարութեան քայլերուն վերաբերող հարցեր:

## Յայաստանը Պատրաստ Է Ամբողջապէս Վերականգնելու Թուրքիոյ Յետ Յարաբերութիւնները, Կ'ըսէ Միրզոյեան

ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը էսթոնիոյ մէջ իր գործընկերոջ հետ ասուլիսի ժամանակ անդրադարձած է Հայաստան-Թուրքիա եւ Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններուն՝ խօսելով նաեւ տարածաշրջանային գործընթացներուն մասին:

«Իմ գործընկերոջը ներկայացրել եմ Հարաւային Կովկասում վերջին իրադարձութիւնները, ներառեալ՝ ՀՀ յարաբերութիւնները հարեւանների հետ: Թուրքիայի հետ

Հայաստանը պատրաստ է ամբողջովին վերականգնել դիւանագիտական յարաբերութիւնները, բացել սահմանները եւ կարգաւորել յարաբերութիւնները: Մենք արդէն յստակ համաձայնութիւններ ունենք՝ բացելու ՀՀ-Թուրքիա սահմանը երրորդ երկրների քաղաքացիների եւ ՀՀ ու Թուրքիայի դիւանագիտական անձնագրերով քաղաքացիների համար: Կարծում եմ՝ ժամանակն է կեանքի կոչել այդ համաձայնութիւնները», - նշած է Միրզոյեան:

## «Փարիզը Կ'օգտագործէ Երեւանը Որպէս Նպատակներուն Յասնելու Գործիք». ՌԴ ԱԳՆ

Փարիզը կ'օգտագործէ Երեւանը որպէս սեփական նպատակներուն հասնելու գործիք եւ չ'առաջնորդուիր Հայաստանի ու հայ ժողովուրդին շահերով: Ծեպագրոյցի ընթացքին այս մասին յայտնած է Ռուսաստանի Արտաքին գործերու նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով Ֆրանսայի իշխանութիւններուն գործողութիւնները՝ գինելու Ուքրանիան, իսկ այժմ արդէն՝ Հայաստանը:

«Սա բնորոշ է Փարիզի քաղաքականութեան՝ ըլլալ ամէնուր եւ որեւէ պատասխանատուութիւն չկեր: Անոնք միխոն հնարաւորութիւններ ունէին հակամարտութիւնները լուծելու համար, անոնցմէ մէկն ալ նոյն Միսքի համաձայնագրերն էին: Յետոյ մենք իմացանք, որ այդ եղած է սոսկ շղարշ», - ըսած է Զախարովան:

Անդրադառնալով կովկասեան տարածաշրջանին՝ Զախարովան ընդգծած է, որ կայ խաղաղութեան ծրագիր, իրավիճակի կարգաւորման քայլ առ քայլ ճանապարհային քարտէզ, տնտեսական եւ մարդասիրական հնարաւորութիւններու բացում, փոխադրութեան լոկիսթիքի կառուցում, եւ այդ ամէնը ներառուած է Երեւանի, Պաքուի եւ Մոսկուայի կողմէ ձեռք բերուած համապատասխան պայմանաւորութիւններուն մէջ:

Զախարովան կը կարծէ, որ Փարիզի հռետորաբանութիւնը ուղղուած է ոչ թէ խաղաղ կարգաւորման, այլ հակամարտութեան հաւասականութիւնը բորբոքելուն: Միտամանակ ան վստահ է, որ Ֆրանսայի իշխանութիւնները անկէ յետոյ պատասխանատուութիւն պիտի չկրեն, եւ պիտի տառապին խաղաղ մարզիկ:

# Ըստ Փորձագետին՝ ԵՄ-ի Մէջ Երեւանէն Կ'ակնկալեն Ռուսական Ուղեծիրէն Զեռանալու Յաստակ Քայլեր

ԵՄ գազաթնժողովը Յունիսի վերջին հաստատեց ԵՄ նոր դեկավարները. Փորձուկալի նախկին վարչապետ Անթոնիո Քոսթան նշանակուեցաւ Եւրոպական Խորհուրդի նախագահ, Էսթոնիոյ վարչապետ Քայա Քալասը՝ արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան հարցերով բարձր յանձնակատար, Ուրսուլա վոն Էրկերը՝ երկրորդ ժամկէտով Եւրոյան ձեռնարկի ղեկավար:

Ըստ «Ազատ Եւրոպա/Ազատութիւն» ռատիոկայանի եւրոպական հարցերով փորձագէտ Ռիքարտ Եոզվիաքի՝ անհաստական առումով սա լաւագոյն կազմն է, որ Հայաստանը կրնար յուսալ: Այս կազմը, փորձագէտին կարծիքով, Հայաստանի օգտին է ԵՄ ձգտումներուն մէջ:

«Հիմա այն բաներուն մասին, որոնք ձեր օգտին չեն. ընդլայնումը կ'որոշեն ԵՄ բոլոր անդամ երկիրները՝ ազգային մայրաքաղաքներուն մէջ: Ես հիմա կը կարծեմ, որ այդ ընդլայնումը կրնայ այլեւս այդքան հանրահռչակ չըլլալ: Խօսքս յատկապէս, օրինակ, Հոլանտայի նոր կառավարութեան մասին է, որ բաւականին թերահաւատօրէն կը վերաբերի նոր ընդլայնման: Ես կը մտածեմ Ֆրանսայի մէջ սպասուող ընտրութիւններուն մասին, ուր Լը Փենը, նոյնիսկ չյաղթելու պարագային, խորհրդարանին մէջ շատ մեծ թիւով պատգամաւորներ պիտի ստանայ: Եւ անոնք առանձնապէս կողմնակից չեն ընդլայնման: Այնպէս որ, ինձ աւելի շատ կը մտահոգեն առանձին անդամ երկիրները ու անոնց դժկամութիւնը աւելի շատ երկրներ ընդունելու համար, ինչպէս նաեւ ապագային Հայաստանի անդամակցութեան վրայ վեթօ դնելու հնարաւորութիւնը: Կը կարծեմ՝ լաւ է, որ այս մարդիկ Պրիւքսէլի մէջ կան: Բաց պէտք է մարդիկ ունենալ նաեւ տարբեր մայրաքաղաքներուն մէջ, մարդիկ որոնք հայամէջ են եւ կ'ողջունեն եւրոպական ընդլայնումը», - ըսաւ Եոզվիաքը:

Դիտարկման, թէ այնուամենայնիւ դեռ հնարաւորութիւն կայ, որ Հայաստանը ստանայ թեկնածու երկրի կարգավիճակ, փորձագէտը այսպէս արձագանքեց. «Անկախ անկէ, թէ դուք թեկնածուի կարգավիճակ կը ստանաք յառաջիկայ հինգ



Փորձագէտ Ռիքարտ Եոզվիաքի

տարիներու ընթացքին, դուք միշտ կրնաք դիմել, ատիկա միշտ ալ հաւանական է: Բաց խնդիրը այն է, որ, ինչպէս ես կը լսեմ նաեւ Եւրոմիութենէն եւ Պրիւքսէլէն, անոնք կ'ըսեն՝ «այո՛ւ, բաց մենք կ'ուզենք տեսնել յստակ քայլեր, որ դու կը հեռանես ռուսական ուղեծիրէն»: Իսկ ատիկա կը նշանակէ հեռանալ ՀԱՊԿ-էն, ատիկա կը նշանակէ դուրս գալ Մաքսային Միութենէն: Եւ անոնք իրականութեան մէջ այնքան ալ չեն հաւատար, որ Հայաստանը իսկապէս պատրաստ է ընելու այդ քայլերը Ռուսաստանի հետ, քանի որ անոնք դեռ որոշակի առումով կ'ապրին 2013 թուականին տեղի ունեցածի ստուերին մէջ, երբ Հայաստանը պէտք է ստորագրէր Եւրոմիութեան ընկերակցման համաձայնագիրը, բայց վերջին պահուն հեռացաւ: Նախքան խօսիլը, պէտք է քայլեր ձեռնարկել: Եւ ատիկա այն է, ինչ անոնք կ'ուզեն տեսնել՝ նախքան պատրաստ ըլլալը ամբողջութեամբ ընդունելու Հայաստանի ընթացքը դէպի Արեւմուտք»:

Ընկերակցման համաձայնագրին շուրջ աւելի քան երեք տարի Եւրոմիութեան հետ բանակցելէ յետոյ, 2013 թուականի Սեպտեմբերին, Հայաստանը յայտարարեց Մաքսային Միութեան, ապա՝ Եւրասիական Տնտեսական Միութեան անդամակցելու որոշման մասին: Տարիներ անց Հայաստանը եւ Եւրոմիութիւնը յարաբերութիւնները խորացնելու համար նախատորարկեցին մէկ այլ՝ համապարփակ շրջանակային համաձայնագիր, որ ստորագրուեցաւ 2017-ի Նոյեմբեր 24-ին, Պրիւքսէլի մէջ:

## «Գարեգին Բ. Կոչեր Կը Զնչեցնէ Վարչապետ Փաշինեանի Զրաժարականին Մասին».

### ԱՄՆ Պետական Քարտուղարութեան Զեկոյցը

ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը հրապարակած է աշխարհի շուրջ 200 երկրի մէջ, ներառեալ՝ Հայաստանը, կրօնական ազատութիւններու մասին տարեկան իր գեկոյցը:

Հայաստանի հատուածին մէջ այն կը խօսի եկեղեցիկառավարութիւն յարաբերութիւններու լարուածութեան, կրօնական փոքրամասնութիւններու հետ կապուած խնդիրներու եւ այլ հարցերու մասին:

Ըստ գեկոյցին՝ Հայաստանի «սահմանադրութիւնը կ'արգիլէ կրօնքի վրայ հիմնուած խտրականութիւնը եւ կը սահ-

մանէ «կրօնական կազմակերպութիւններու» եւ պետութեան տարանջատում: Այն կը ճանչնայ «Հայ Առաքելական Եկեղեցւոյ» որպէս ազգային եկեղեցի բացառիկ առաքելութիւնը «Հայաստանի ժողովուրդի հոգեւոր կեանքին մէջ, ազգային մշակոյթի գարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործին մէջ»:

Զեկոյցը կը շեշտէ. «Կառավարութեան եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ներկայացուցիչները, այդ շարքին՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդ, կաթողիկոս Գարեգին Բ. ու վար-

# Հայաստանի Եւ Ատրպէյճանի Միջեւ Խաղաղութեան Զանաձայնագիր Կնքելու Բացառիկ Զնարարութիւն Կայ. Պլինքըն

Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղ պայմանաւորութեան ծրարներու ձեռքբերման բացառիկ հնարաւորութիւն կայ: Պրիւքսէլի հիմնարկին մէջ ելոյթի ժամանակ այս մասին յայտնած է ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պլինքընը:

«Երկիրներու միջեւ խաղաղ պայմանաւորութեան ծրարները իրագործելու բացառիկ հնարաւորութիւն կայ, ինչ որ պիտի դադրեցնէ տասնեակ տարիներ շարունակուող հակամարտութիւնը, եւ, կը կարծեմ, տարածաշրջանին մէջ հսկայական հնարաւորութիւններ պիտի ստեղծէ տնտեսական կապերու, տնտեսական աճի, Արեւելքի եւ Արեւմուտքի, հարաւի եւ հիւսիսի երկիրներուն միջեւ կապերու հաստատման տեսանկիւնէն: Ատրպէյճանը պէտք է վճարող դեր խաղայ անոր մէջ», - նշած է Պլինքընը:

«Մենք աշխուժօրէն հետամուտ եղած ենք դիւանագիտական ճանապարհով՝ փորձելով Ատրպէյճանը եւ Հայաստանը մօտեցնել խաղաղու-



ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պլինքըն

թեան համաձայնագրերուն: Եւ ես կը կարծեմ, որ սա իսկապէս հասանելի է հիմա: Այս մասին ես խօսած էմ ընդամենը մօտ մէկ շաբաթ առաջ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ», ըսած է ան:

## Ալիեւը Վերստին Կը Պնդէ՝ Խաղաղութեան Պայմանագրի Պայմանը ԶԶ Սահմանադրութեան Փոփոխութիւնն Է

Ատրպէյճանի նախագահը վերստին պնդած է՝ խաղաղութեան պայմանագրի կնքման կարելորագոյն պայմանը Հայաստանի Սահմանադրութեան փոփոխութիւնն է, քանի որ անոր մէջ, ըստ Իլհամ Ալիեւի, տարածքային պահանջներ կան իր երկրին նկատմամբ:

«Քանի դեռ այդ տեղի չէ ունեցած, խաղաղութեան պայմանագիրը չի ստորագրուիր: Այդ հասկանալի է», - APA գործակալութեան փոխանցմամբ՝ ըսած է Ալիեւը Գանատայի նորանշանակ դեսպան Քեվլըն Համիլթընի հաւատարմագրերը ընդունած ատեն:

Սահմանադրութեան փոփոխութեան՝ Պաքուէն հնչող պահանջներուն Երեւանէն բազմիցս հակադարձած են, որ անոնք Հայաստանի ներքին գործերուն միջամտելու փորձ են:

Ալիեւ վստահեցուցած է, թէ այդ պայմանը կատարելու պարագային խաղաղութեան պայմանագրի բնագրին կամ առնուազն անոր հիմնական սկզբունքներուն վրայ աշխատանքը հնարաւոր պիտի ըլլայ աւարտել քանի մը ամսուայ ընթացքին: Հնարաւոր տարբերակներէն մէկը ան համարած է հիմնական սկզբունքներու նախատորարկումը:

Միաժամանակ, Ատրպէյճանի նախագահը վստահեցուցած է, որ «ներկայիս կը տեսնենք լաւագոյն արդիւնքները երկկողմ մակարդակով»: «Ոչ ոք կը միջամտէ այս գործընթացին», - յաւելած է Ալիեւը:



Ատրպէյճանի բռնապետ Իլհամ Ալիեւ

«Մենք կրնանք համաձայնութեան գալ սահմաններու սահմանազատման եւ նոյնիսկ, ինչ որ հազուադէպ կ'ըլլայ, անոնց սահմանագծման հարցով: Ճիշդ է, խաղաղութեան համաձայնագիրը ստորագրուած չէ, սակայն արդէն հասած ենք սահմաններու սահմանազատման», - ըսած է Ատրպէյճանի նախագահը:

Վերադարձի իրաւունքի մասին դեսպանին մեկնաբանութեան Ալիեւ պատասխանած է, թէ «վերադարձի իրաւունքը պէտք է ապահովուի երկուստեք, այդ շարքին պէտք է վերաբերի Արեւմտեան Ատրպէյճանի համայնքի ներկայացուցիչներուն», - կը փոխանցէ ատրպէյճանական պարբերականը:

Հայաստանի Նիկոլ Փաշինեանը հրապարակապէս քննադատական յայտարարութիւններ ըրած են իրարու հասցէին՝ կապուած Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գործունէութեան եւ քաղաքականութեան մէջ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ներգրաւուածութեան հետ»:

Ըստ գեկոյցին՝ 2023 թուականի ընթացքին Հայ Առաքելական Եկեղեցւոյ հոգեւորականները շարունակած են առանց սահմանափակումներու մասնակցել քաղաքացիական խօսույթին, իսկ Գարեգին Բ. կաթողիկոսը՝ կոչեր հնչեցնել վարչապետ Փաշինեանի հրաժարականին մասին:

## Freedom House-ի Ձեկոյցը

Շարունակուած էջ 1-էն

Ձեկոյցը վերլուծութեան ենթարկած եւ փաստած է, թէ ինչպէս Լեռնային Ղարաբաղի մէջ մարդիկ դիտարկուած կերպով ենթարկուած են կանոնաւոր յարձակումներու, ահաբեկման, տարրական իրաւունքներէն եւ համապատասխան կենսապայմաններէն զրկուածութեան եւ զանգուածային տեղահանութիւններու:

Ապացոյցները ցոյց կու տան, որ ատրպէյճանական պետութիւնը գործած է մեթոտաբար մշակուած ռազմավարութեամբ՝ Լեռնային Ղարաբաղը իր հայ բնակչութենէն, պատմական եւ մշակութային ներկայութենէն դատարկելու համար:

Ձեկոյցին մէջ ներկայացուած ապացոյցները յստակօրէն կը մատնանշեն, որ այդ հարցին մէջ ատրպէյճանական իշխանութիւնները իրենց գործողութիւնները իրականացուցած են մեթոտական եւ համակարգուած ձեւով՝ նպատակ ունենալով Լեռնային Ղարաբաղը զրկել բնիկ հայերէն, մաքրել տարածաշրջանը հայկական պատմական ժառանգութենէն ու մշակոյթէն:

2020 թուականէն մինչեւ 2024 թուականի Մայիս ինկած իրադարձութիւններու ընթացքին կազմակերպութեան փաստահաւաք առաքելութիւնը իր ուսումնասիրութիւններու ընթացքին արձանագրած է Ատրպէյճանի պաշտօնեաներուն կողմէ մարդու իրաւունքներու կոպիտ խախտումներ, միջազգային մարդասիրական իրաւունքի եւ միջազգային քրէական իրաւունքի խախտումներ, ինչպէս նաեւ միջազգային իրաւունքի պարտադիր կանոններու լուրջ խախտումներ:

Ձեկոյցը, ուսումնասիրութեան առնելով Ատրպէյճանի իշխանութիւններուն գործողութիւնները եւ հռետորաբանութիւնը, նկատած է, որ այն հիմնաւոր հիմքեր կու տայ եզրակացնելու, որ անոնց բռնի տեղահանումը եղած է միտումնաւոր: Փաստերը ցոյց կու տան, որ գոյութիւն ունի համակարգուած երկարամեկէտ ծրագիր, որ ուղղուած է Լեռնային Ղարաբաղը հայ բնակչութենէն ազատելու: Այդ քաղաքականութիւնը ձեռք բերուած է կանոնաւոր գործողութիւններու միջոցով, որոնք կը հանդիսանան մարդու իրաւունքներու, միջազգային մարդասիրական իրաւունքի եւ միջազգային քրէական իրաւունքի կոպիտ խախտումներ:

Ձեկոյցը յստակ կը մատնանշէ, որ ատրպէյճանական պետութիւնը աստիճանաբար եւ մեթոտաբար ստեղծած է այնպիսի կենսապայմաններ, որոնք նպատակ ունեցած

են կա՛մ հայ բնակչութեան աստիճանական ոչնչացման, կա՛մ ալ անհնարին դարձնել անոնց մնալն ու գոյատեւումը, որ յանգեցուցած է բռնի տեղահանութեան:

Ձեկոյցը կը նկատէ, որ միջազգային կանոններու մշտական անտեսումը եւ շարունակուող խախտումները, չնայած միջազգային դատաւարաման, նոյնպէս կը վկայեն հայ բնակչութիւնը վերաբնակեցնելու՝ Ատրպէյճանի կառավարութեան մտադրութեան մասին:

Ձեկոյցը կը նշէ, որ Ատրպէյճանի փաստաթղթաւորութեան գործողութիւնները կը համապատասխանեն ցեղային գտնումներու չափանիշերուն, որոնք կը հասկցուին նախկին Հարաւսլաւիոյ հակամարտութեան ծիրին մէջ, որ իրականացուած է արտադատական սպանութիւններու, խոշտանգումներու, կամայական ձերբակալութիւններու եւ կալանաւորումներու, ինչպէս նաեւ անունդի եւ կեանք փրկող դեղամիջոցներու հասանելիութեան սահմանափակումներու միջոցով:

Հրապարակուած զեկոյցը նաեւ լիչեցուցած է, որ Ատրպէյճանը իրականացուցած է Լեռնային Ղարաբաղի բնակչութեան տեղահանութիւնը՝ անտեսելով միջազգային բոլոր կառույցներուն, այդ շարքին ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանին եւ այլ կառույցներուն ընդունած բանաձեւերը:

Փաստահաւաք առաքելութեան կատարած աշխատանքը ցոյց տուած է, որ առկայ են բաւարար ապացոյցներ՝ եզրակացնելու, որ ատրպէյճանական այս գործողութիւնները, ինչպէս նաեւ զեկոյցին մէջ նշուած այլ արարքները, նոյնպէս յանցագործութիւններ են՝ համաձայն Միջազգային քրէական դատարանի Հռոմի կանոնադրութեան, ներառեալ 7-րդ յօդուածը (մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնները): 8-րդ յօդուածը, որուն համաձայն՝ կատարուածները պատերազմական յանցագործութիւններ են եւ համահունչ են տեղահանութեան կամ բնակչութեան բռնի տեղափոխման սահմանման:

Այս բացայայտումները եւ Ատրպէյճանի մէջ ներպետական հետապնդումներու բացակայութիւնը կ'ընդգծեն միջազգային իրաւական վերահսկողութեան եւ հաշուետուողականութեան հրատապ անհրաժեշտութիւնը, որպէսզի գործը փոխանցուի Միջազգային քրէական դատարան՝ ապահովելու մանրակրկիտ հետաքննութիւն եւ այս սարսափելի արարքներու համար պատասխանատու անձերու նկատմամբ հնարաւոր քրէական հետապնդում:

## Արման Սահակեան Ինքզինք Սեղաւոր

Շարունակուած էջ 3-էն

177.539.790 ՀՀ դրամ շուկայական արժէքով գոյքը դուրս եկած է պետութեան գոյքային ֆոնտէն:

Նախաքննութեան ընթացքին Արման Սահակեանին մեղադրանքներ կայացուցուած է ՀՀ նախկին Քրէական օրէնագիրքի 308-րդ յօդուածի 2-րդ մասով: Ներկայացուած մե-

ղադրանքով վերջինս ինքզինք լիովին մեղաւոր ճանչցած է եւ ամբողջութեամբ վերականգնած է պետութեանը պատճառուած վնասը:

Քրէական վարոյթով նախաքննութիւնը աւարտած է, եւ վարոյթի նիւթերը մեղադրական եզրակացութեամբ ուղարկուած են դատարան՝ ըստ էութեան քննելու համար:

## Հայաստանը ԵՄ-ին Անդամակցելու Համար

Շարունակուած էջ 1-էն

խումները առաջընթացը, քննարկելու այն մարտահրաւերները, որ գոյութիւն ունեն ՀՀ-ում ժողովրդավարական բարեփոխումների եւ ժողովրդավարութեան զարգացման համար:

«Կարծում եմ՝ որպէս արդիւնք մենք պէտք է ընդգծենք, միասին ամփոփենք, թէ հետագայ զարգացման ինչ մարտավարութիւն պէտք է որդեգրենք ժողովրդավարական բարեփոխումների համար եւ ճանապարհային ինչ քարտեզ պէտք է ունենանք, որպէսզի ժողովրդավարութեան զարգացման առումով մեր ջանքերը համարուեն: Սա իր հերթին նշանակում է, որ այս համագումարը պիտի արձանագրի մեր բոլորի հաւաքական կամքը՝ ժողովրդավարութիւնը ՀՀ-ում ամրացնելու ու զարգացնելու: Բայց սրա համար նաեւ պէտք է արձանագրենք, թէ ինչ է տեղի ունեցել ժողովրդավարութեան այն օրակարգի հետ, որ մենք ունեցել ենք 7 տարի առաջ:

«Պէտք է արձանագրեմ, որ առնուազն քիչ չեն այն փոփոխութիւնները, որոնք տեղի են ունեցել Հայաստանում ժողովրդավարութեան առումով: Օրինակ՝ «ընտրութիւնների կեղծիք» կամ «ընտրութիւնների արդիւնքները կեղծել» արտայայտութիւնները, կարծում եմ, արդէն պատմական ժանրին են վերագրուած ՀՀ-ում, եւ դա

շատ կարեւոր է»:

Մեր ապրած երկիրը]: Թուրքիան կենսական փորձեր կը ներկայացնէ հոգեւոր աշխարհի քաղաքականացման անպատեհութիւններու մասին: Համաշխարհային մարդկութեան դարեր առաջ վերածննդեան մեծ ցնցումներով անցած փորձի դարեր ետք կրկին օրակարգի նիւթ դառնալը մտահոգիչ է բոլորին համար:

Նման արժանիքի անկում մը կ'ապրի նաեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Կարծես թէ ան անգամ մը եւս ներկայացաւ պատմութեան մէջ բազում անգամներ կրկնուած սխալ կողմնորոշմի դիմաց: Յեղասպանութեան նախորդող տարիներուն, երբ իթթիհատականները վաղուց վճռած էին Օսմանեան Կայսրութիւնը փլել, դաշնակցութիւնը փորձեց այդ նոյն կայսրութիւնը փրկել ու անսասան պահելու համար պայքարիլ համայն աշխարհի դէմ: Արդիւնքը ծանօթ է բոլորին:

30 տարի անց, Բ. Համաշխարհային պատերազմի օրերուն իբրեւ թէ գերավարուած Հայաստանը փրկելու մարմաջով Հիթլերի կողքին պատերազմելու համար Դրոյնի հրամանատարութեան տակ հայ կամաւոր հաւաքելու ձգտողը նոյն դաշնակցութիւնն էր: Այդ կուսակցութիւնը ազգայնականութեան քողին ետեւ պաղ պատերազմի տարիներուն ալ շարունակեց հակահայաստանեան իր կեցուածքը ապագային համարած խորհրդային Հայաստանի հանդէպ:

Շար.ը էջ 15

Կազմակերպութեամբ՝  
Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի

## ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ 109-ԱՄԵԱԿԻ ՈՒԵԿՈՉՈՒՄ



Գլխաւոր Բանախօս՝  
**ԸՆԿ. ՏՈՔԹ. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՅԵԱՆ**  
ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Ատենապետ

Պիտի Յուցադրուի  
«Քսանի Լուսաբացը» Վաւերագրական Ժապաւէնը

Գեղարուեստական Յայտագիր

**Կիրակի Յուլիս 14, 2024**  
Երեկոյեան Ժամը 5:00-ին

Իրանահայ Միութեան Սրահէն Ներս  
117 S. Louise St., Glendale, CA 91205

info@sdhpusa.org  
Մուտքը Ազատ



# Գրիգոր Զօհրապ` Տաղանդաշատ Տիլեթթընթը



## ՅԱԿՈՒ ՏԻՆԵԱՅԵԱՆ

26 Յունիսը արեւմտահայ գրականութեան ակնաւոր դէմքերէն Գրիգոր Զօհրապի (Պոլիս, Պէշիկ-թաշ թաղամաս, 26 Յունիս 1861 - 6 Յունիս 1915, Մեծ Եղեռնի զոհ, Հալէպէն դէպի Ուրֆա տանող ճամբուն վրայ) ծննդեան օրն է: Գրական տիրտան մը, որ ամէն առիթով իրեն կը հրաւիրէ գրասէր ընթերցողի, գրաքննադատներու ուշադրութիւնն ու մտասեւեռումները:

Ան՝ ազդեցիկ դէմքերէն մին իր ժամանակի, խիզախ հրապարակագիր եւ հրապարակախօս մը իրապաշտ ու Արուեստագէտ սերունդներու փաղանգին մէջ, անսպառ թանաք սպառել տուաւ ոչ միայն իր գրականութեան մասին, այլեւ յատկապէս կանանց վարքին ու բարքին եւ իրականութեան ու սուտին մասին իր ճառերով, որոնք ցայսօր յաճախ կը դրուին լուսարձակի տակ:

Զօհրապի առնավայել խիզախ կեցուածքին ու յախուռն նկարագիրին մէկ դրսեւորումը ի յայտ կու գայ 1878-ին՝ դեռ հազիւ 17-ամեայ պատանի մը ան, երբ անվեհեր քննադատի իր բնատուր ձիրքով, հռետոր հրապարակախօսի իր տաղանդին իբրեւ մէկ արտացոլում մը, փետրաթափ կ'ընէր 1878-ին Պերլինի վեհաժողովին Խրիմեան Հայրիկին հետ մասնակցած Ազգային պատուիրակութեան քարտուղար Մինաս Զերազը, որ իր ճակատին կրելով հանդերձ 61-րդ յօդուածին կսկծազին խարանդ՝ իբր թէ Անգլիոյ «բարեկամութիւնը» շահած, Եւրոպայի մէջ սկսեր էր խմբագրել «L'Armenie» թերթը, ստերջ ու միամիտի սիգանքով մը հայոց դատը եւ հայ ազգը Եւրոպային ծանօթացնելու, հուսկ ալ անկախութիւն շահելու երազով...:

Այդ թուականէն տաս տարի ետք՝ 1888-ի Յունուարի 31-ին էր, որ Զօհրապ պիտի ընտրէր իր կեանքի ընկերը եւ ամուսնանար Քարա Եագրճեան անուն շնորհալի օրիորդի մը հետ, բախտաւորութեամբ չորս զաւակներով: 28 տարի տեւած այդ ամուսնութիւնը իրօք սիրովէն մը կը համարուի գրքամոլ ընթերցողին համար:

18-րդ դարու ֆրանսացի խոշոր լուսաւորիչ-փիլիսոփայ, բանաստեղծ եւ իրաւապաշտպան գրող Վոլթէր, Գեմոկրատիայի ջատագով մը չըլլալով հանդերձ կը պնդէր սակայն, թէ գրագէտի մը ճշդատեսութիւնը, թելադրութիւնները, տրամաբանութիւնը, իրենց տիրական եւ ազդու միջամտութիւնը պէտք է տարածեն ե՛ւ քա-

ղաքական, ե՛ւ գիտական, ե՛ւ ընկերային ու կրօնական աշխարհներու մէջ՝ գրական յեղափոխութեամբ գրահելու մարդոց հնչեցուցած ճշմարտութիւնները եւ կատարած դատումները: Ու այստեղէն՝ իրաւաբան Զօհրապի անկողումը կորովի իրաւապաշտպանի դատումները, որով իր կիրքերը քաղցին քովէ քով սերտօրէն Վոլթէրի իրաւատես ու ընդոժին տաղանդին հետ. իրականութիւն մը, որ քիչերուն է տրուած մեր գրականութեան դաշտին մէջ:

Արդարեւ, արեւմտահայ գրականութիւնը՝ իրապաշտներէն մինչեւ Գեղապաշտ սերունդի շքահոյլին կազմաւորումը 1900-ի սկիզբները, իր պահակագունդի առաջին շարքին կ'ընդունի անունը Գրիգոր Զօհրապի, որ ասպարէզով՝ նախ երկրաչափ, ապա կարկառուն իրաւաբան, յառաջապահ դէմքերէն մէկն եղաւ նաեւ Օսմանեան խորհրդարանին ներս: Ու ամէնէն կարեւորը՝ «Իշխան»-ը մեր նորավիպագրութեան: Խմբագիր, գրաքննադատ, երգիծագիր, բանաստեղծ ալ: Դեռ...: Պետական Համալսարանին ներս Պատժական օրէնքի դասախօս, եւ ինչպէս նշեցինք՝ պետական երեսփոխան Օսմանեան խորհրդարանի: Քաղաքական ջղուտ ու հեղինակաւոր գործիչ:

Սա թուարկումները նորավիպագրութեան «Իշխան»ի մասին բաւարար չե՞ն միթէ նախանձը եւ վախը քողագերծելու թուրքին, որով Սուրէն Պարթեւեան մը, «Յուսաբեր»ի 7 Սեպտեմբեր 1915-ի թիւին մէջ «Գրիգոր Զօհրապ» խորագրի տակ, պիտի չուզէր թաքցնել իր միտքը, հետեւեալը գրելով ի միջի այլոց. «...Սահմանադրական Թուրքիան իրմով կրնար փառաւորուիլ, բայց վախցաւ միայն իրմէ: Նորատունկեան մը չէր ան, ոչ ալ Հայրաճեան մը: Հանճարին դէմ ոչնչութիւններու մախանքն երբեք աւելի ուշադրաւ պատկեր մը չձեւացուց՝ որքան Օսմանեան Մէպուսարանին ոճրագործներու այդ պաշտօնական որջին մէջ, ուր Զօհրապին հանդուրժեցին, անոր վրայ սքանչացան, բայց միշտ խուսափեցան անոր յանձնուելէ: Վտանգի օրերուն անոր տունն ապաստանած, անոր սեղանը նստած Խալիլ պէյերը մատ մ'իսկ չվերցուցին՝ զայն ճամբէն ազատելու համար...: Անոր մէջ հայ ազատաստեղծ մտքին է որ կ'երկնար Իթթիհատին մարդասպան ձեռքը...»:

Հմտիմաց իրաւաբան մը՝ Զօհրապ իրաւագիտական իր առաջին աշխատութիւնը կ'ամբողջացնէ

1883-ին, 22 տարեկանին: Այնուհետեւ կը սկսի գեղարվ փաստաբանական աշխատանքներով: «Անհետացած Սերունդ Մը» խորագրեալ իր երախտալիքը կ'ազդարարէ խիզախութեամբ իր վիպական առաջին ճիգերուն՝ 1885-ին: Կիսաւարտ «Նարդիկ» վէպը՝ դժուար ճգնութենէ ետք, կը թելադրէ իրեն ընտրել վէպին ու կարճ պատմութեան միջինը, պիտի ըսեմ՝ բարեխառնութիւնը, գրական նոր սեռը՝ նորավիպագրութիւնը:

31 Դեկտեմբեր 1909-ին ան կը հրատարակէ «Խղճմտանքի Զայներ» նորավէպերու շարքը, որուն կը յաջորդեն «Կեանքը Ինչպէս Որ է» եւ «Լուռ Ցաւեր» նորավէպերու շարքերը, որոնք լոյս կը տեսնեն 1911-ին, Պոլիս: Այսպէս, ընդամենը 41 նորավէպ, բոլորն ալ քաղուած «Մասիս» «Արեւելք» «Ծաղիկ» «Հայրենիք» «Լոյս» օրաթերթերէն ու գրական հանդէսներէն՝ ամփոփուած յիշեալ վերջին երեք երկերուն մէջ: «Էջեր Ուղեւորի Մը Օրագրէն» խորագրեալ ճամբորդական նոթերու շարքը գրուած է 1909-1913 թուականներուն՝ բուժման եւ այլ նպատակներով Պելճիքա, Գերմանիա եւ Ֆրանսա գտնուած ժամանակաշրջանին:

Զօհրապի «Ծանօթ Դէմքեր Եւ Պատմութեան» ժողովածուն մէջ սեւեռումի տակ կ'առնուին գրական ու հրապարակագրական ժամանակակից դէմքերու, հասարակական գործիչներու նկարագրները, արժանիքները, անոնց մեղկութիւններն ու թերութիւնները՝ զեղարուեստական կիրթ երգիծումով նշարկուած:

Ֆրանսացի Ժ. Դարու անունի վիպագիր Կի Տը Մօփասանի նորավէպերն ու պատմութեանքերը, ինչպէս՝ «Ճարպագունդը», «Ջարդը», «Կրակին Թագաւորութիւնը», Զօհրապի «Ճիտին Պարտքը», «Այրին», «Փոթուրլըն» եւ միւս կարգ մը նորավէպերուն հետ համագաց ապրումներով կը յարդարեն ընթերցողին տեսողաշտը՝ գլխաւոր Յաւին հասնելու ի վերջոյ, ուր

մարդ կ'ուզէ իր հոգիին խորանին առջեւ այդ Յաւը որպէս հաւատքի կերտն մշտապէս վառել...:

Իր «Ակնարկներ»-ը՝ գրուած իրապաշտ հիւմորով, բորբ յանդդնութեամբ մը կը մերկացնեն եւրոպական, առհասարակ ժամանակի հասարակութեան մէջ մնացուն ախտի վերածուած դասակարգային խոր ու դժպիտ, անհաճոյ հակադրութիւնները, ինչպէս՝ «Շիշլիի Գերեզմանատունը Մեռելոցի Կիրակին»-ին մէջ: «Բեռնի Տակ» տպաւորապաշտ յօդուածին մէջ կը բացայայտուին դրամին բռնատիրական քաղաքականութիւնը մարդոց բարոյականին ու հոգեբանութեան վրայ: «Վերջին Արեւագալը» ակնարկը այլաբանական երկ մըն է՝ Համիտեան կոտորածներէն ետք թշուառ ու գաղթական իրավիճակը պատկերող: 1915-ի Մեծ Եղեռնի օրերուն, Իթթիհատ վէթերաքը կուսակցութեան ոճրագործ պարագլուխներու ժանիքներով իր դաժանօրէն սպանութեան տարի մը առաջ, իր «Գիրեր Պատերազմի Դաշտէն»-ը ակնարկնամակներ են, ուր կը խարագանուին գերման ոճրագարտ աշխարհակալական նկրտումները խաղաղասէր ժողովուրդներու դէմ: Ապա «Էջեր Ուղեւորի Մը Օրագրէն»-ը, այնուհետեւ տպաւորապաշտ էջերէն՝ «Կոտորէլն Ետքը», մեր ապրած կեանքի փիլիսոփայութիւնն են խորախորհուրդ:

1913-ին, Փարիզի մէջ, «Մարսէլ Լար» ծածկանունով Զօհրապ ֆրանսերէնով հրատարակած է իր աշխատութիւնը՝ «Հայկական Հայրցը Վաւերագրերու Լոյսին Տակ» խորագրով, որուն մէջ օգտագործուած են արեւմտահայ քաղաքական իրավիճակին, մշակութային ու տնտեսական գործունէութեանց փաստագրական հարուստ նիւթեր՝ Ա. Աշխարհամարտի խառն ժամանակները ընդգրկող:

Իսկ բանաստեղծը Զօհրապի իմացական յղացքին մէջ: Շուրջ

Շար.ը էջ 15

ENGERAYIN TIVAN PRESENTS

Summer Vibes  
**DINNER PARTY**  
AUGUST 10, 2024

Jaaaaan Restaurant  
145 N. Artsakh Ave.,  
Glendale, CA, 91206

Party Starts  
7 PM

Special Performance By  
**Arman Mardigian || DJ Joe Bekerian**

Non-stop All Night International Music, Raffle, Prizes, Dance Shows, Surprises

for Reservations:  
626-486-7662 Aline  
818-818-9291 Yervant  
818 554-7659 Raffi

Donation \$150  
Proceeds to Benefit Underprivileged Armenian Children

# Իտալիայում ՀՀ դեսպանը Համիտեան Ջարդերին Վերաբերող Բացառիկ Արխիվային Փաստաթղթեր Է Փոխանցել Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտին



Իտալիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մովսիս Զամբարձովը հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին է փոխանցել 19-րդ դարի վերջում Օսմանեան կայսրությունում հայերի եւ այլ քրիստոնեաների հետապնդումների, հալածանքների եւ ջարդերի վերաբերեալ մանրամասն տեղեկություններ պարունակող նորայայտ արխիվային փաստաթղթեր: Դրանց մեծամասնությունը հանդիսանում են հենց բնօրինակներ եւ մանրամասն ներկայացնում են վերոնշյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած ողջ իրականությունը:

«Արմենայրես»-ի թղթակցի հետ զրոյցում՝ Իտալիայում ՀՀ դեսպան Մովսիս Զամբարձովը եւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրէն էդիտա Գոյոյեանը խօսեցին նորայայտ արխիվային փաստաթղթերի պարունակության, դրանց ունեցած կարեւոր նշանակության մասին:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրէն էդիտա Գոյոյեանը տեղեկացրեց, որ փաստաթղթերը ինստիտուտի իտալերէն լեզուին տիրապետող գիտաշխատողի կողմից մանրակրկիտ ուսումնասիրության եւ խմբաւորման կ'ենթարկուի: Նրա խօսքով՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը մէկ այլ իտալացի հետազոտողի հետ համագործակցութեամբ պատրաստուած է հրատարակել այդ արխիվային փաստաթղթերը:

«Երկրորդ անգամ է, որ Իտալիայում ՀՀ դեսպան Մովսիս Զամբարձովը փոխանցեց արխիվային նիւթեր է նուիրում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին», - իր խօսքում նշեց էդիտա Գոյոյեանը: Նա յաւելեց, որ այս փաստաթղթերն Իտալիայի արխիւներում Հայոց ցեղասպանութեանը վերաբերող փաստաթղթեր, թուղթիկներ եւ հրովարտակներ են, որոնք իտալերէն են եւ հանդիսանում են հենց բնօրինակներ:

«Օգտուելով առիթից՝ ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել Իտալիայում ՀՀ-ն ներկայացնող մեր դեսպանին, ով յատուկ ուշադրութեան ներքո է պահում ինչպէս մեր թանգարան-ինստիտուտն, այնպէս էլ Հայոց ցեղասպանութեանը վերաբերող այս նիւթերը եւ արդէն երկրորդ անգամ այսպիսի խոշոր եւ կարեւոր նուիրատուութիւն ենք ստանում նրա-

նից», - եզրափակեց թանգարան-ինստիտուտի տնօրէնը:

Իտալիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մովսիս Զամբարձովը հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին փոխանցում է իտալացի հետազոտողի կողմից մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկուած 19-րդ դարի վերջում ուղարկուած է եղել Փոքր Ասիա, եղել է Օսմանեան կայսրութիւնում՝ Մարաշ քաղաքում, որտեղ էլ առնչուել է հայերի դէմ իրականացուած համիտեան ջարդերին:

«Իտալիայում իմ դիւանագիտական առաքելութիւնը, կարելի է ասել, նոր էի սկսել, երբ ինձ մօտ եկաւ Լիբանանից մի արաբ լրագրող, Հայաստանի եւ հայ ժողովրդի մեծ բարեկամ՝ Թալալ Խրայիս անունով, ով պատերազմական լրագրող է եւ հիմա Իտալիայի մայրաքաղաք Հռոմում տեղակայուած լիբանանեան ազգային գործակալութեան ներկայացուցիչն է, ինչպէս նաեւ արաբ-իտալական «Ասսադակահ» ասոցիացիայի քարտուղարն է: Նա ինձ յանձնեց այս արխիւը: Նա Իտալիայի Լացիօ նահանգի մի փոքրիկ քաղաքի՝ Օրիոլօ Ռոմանօ քաղաքի բնակիչ է: Նշուած քաղաքից Սալվատորէ Գարզանօ անունով մի աղիւսագործ, ով վերանորոգելիս է եղել քաղաքի մենաստաններից մէկը, աշխատանքների ընթացքում հենց այդ մենաստանի պատի միջոց յայտնաբերել է մի պարկ, որի մէջ էլ պահուած են հենց այս փաստաթղթերը. դրանք պատկանում են Ֆրանցիսկեան վանական, հայր Սալվատորէ Լիլիին», - իր խօսքում նշեց Մովսիս Զամբարձովը: «Մարաշ քաղաքում, որտեղ էլ առնչուել է հայերի դէմ իրականացուած համիտեան ջարդերին:

Դեսպանը մանրամասնեց, որ հայր Սալվատորէն հայերի եւ ընդհանրապէս քրիստոնեաների հանդէպ 1894-1895 թուականների ընթացքում Օսմանեան կայսրութեան սուլթան Աբդուլ Համիտի կառավարման շրջանում իրականացուած հետապնդումների եւ ջարդերի մասին շատ հետաքրքիր վկայութիւններ է թողել:

«Հայր Սալվատորէն նահատակուել է հենց 1895 թուականին՝ 7 այլ հայ վանականների հետ միասին, որոնք չեն ցանկացել կրօնափոխ լինել, չեն ցանկացել միանակ թողնել հայր Սալվատորէին: Յաւօք, վերջինիս հետ միասին բոլորին տանջամահ են արել», - ներկայացրեց դեսպանը՝ շեշտելով,

որ իր ձեռքի տակ յայտնուած փաստաթղթերը բաղկացած են երկու տրցակից, որոնց մեծամասնութիւնը հենց բնօրինակներ են:

Դեսպանը նաեւ յաւելեց, որ փաստաթղթերի մէկ այլ մասն էլ վերջերս է տրամադրուել Իտալիայի կետտի քաղաքում գտնուող հոգեւոր ճեմարանի վանական դոն Վինչենցօ Մասոլոն, ով եւս մշտապէս շատ զգալուն է եղել հայերի ու Հայկական հարցի հանդէպ:

«Նրա տրամադրած փաստաթղթերն ու նամակներն արդէն ոչ թէ բնօրինակներ են, այլ պատճէններ են: Դրանք այն ժամանակ ձեռքով գրուած եւ շատ գեղեցիկ տեսք ունեցող նամակներ են, որոնց հեղինակը եւս հայր Սալվատորէ Լիլին է, եւ դրանք ուղղուած են վերջինիս քրոջը», - նշեց դեսպանը՝ կարծիք յայտնելով, որ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի մասնագէտները՝ Կառլօ Կոպոլայի եւ Սիրանոյշ Կուարանտայի հետ միասին կարող են մշակել եւ ուսումնասիրել նման մեծ կարեւորութիւն ունեցող այս փաս-

ունենայ իր անուան հետ կապուած հրաշքներ, հիւանդութիւններից բուժումներ, ինչպէս նաեւ հանդիսանալ կրօնի համար նահատակուած անձնաւորութիւն», - նշեց Շուշան Խաչատրեանը՝ շեշտելով, որ այս փաստաթղթերում հենց այդպիսի պատմութիւններ եւ իրադարձութիւններ կան ներկայացուած:

Նրա խօսքով՝ փաստաթղթերում առկայ են նաեւ այն մարդկանց վկայութիւնները, եւ նոյնիսկ լուսանկարներ այն մարդանցից, ովքեր տեսել են այդ ամէնը, ենթարկուել են տեղահանութեան եւ չետագայում սպանուել են: Խօսքը նաեւ հենց հայր Սալվատորէի մասին է, ով եւս համիտեան ջարդերի ընթացքում կտտանքների է ենթարկուել եւ սպանուել:

«Բանն այն է, որ Օսմանեան ղեկավարութիւնը երկար ժամանակ հետապնդել եւ տանջանքների է ենթարկել օտարերկրացի միախոններին՝ մեղադրելով նրանց գործակալներ լինելու մէջ: Դրանց թուին է դասուել նաեւ հայր Սալ-



տաթղթերը: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աւագ գիտաշխատող Շուշան Խաչատրեանն, ով կատարել է առկայ փաստաթղթերի մշակումները եւ պատրաստուած է աւելի խորն ու մանրամասն իրականացնելու ընթացքում պարզուել է, որ դա տասնամեակներով հաւաքուած երանցցման եւ սրբադասման արխիւ է:

«Կաթողիկ եկեղեցում կայ այդպիսի աւանդուած, որ անձի երանելի ճանաչուելու համար պէտք է երկար գործընթաց անցնի եւ պէտք է

վատորէն, ով հեղինակել է մի նամակ, որը պէտք է յանձնուել Հռոմի Պապին. նամակում նա նկարագրել եւ տեղեկացրել է այն ամէնն, ինչ կատարուել է հայերի եւ քրիստոնեաների հետ Օսմանեան ղեկավարութեան կողմից, ինչպէս նաեւ այն, որ իրեն ուղղուած մեղադրանքները շինծու են», - ասաց Շուշան Խաչատրեանը:

Վերջինս տեղեկացրեց, որ նորայայտ փաստաթղթերը պէտք է մանրամասն ուսումնասիրութեան ենթարկուեն, քանի որ դրանք շատ մեծ նշանակութիւն ունեն եւ լուրջ տեղեկութիւններ են պարունակում հենց համիտեան ջարդերի վերաբերեալ:

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**  
Վարձու է 3 սենեակ 1 1/2 բաղնիք, central AC/heat, 2 կանգառով եւ ցանկապատուած փակով տուն Փասատինայի մէջ: Մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 818-897-3355:  
**FOR RENT**  
3 Bedroom 1 1/2 bath, central air-heat  
2 car parking, fenced backyard house for rent in Pasadena.  
Please call 818-897-3355

### «Ոսկե Ծիրան» Փառատօնի Կարմիր Գորգը Պիտի Փոխարինուի



Այս ամսուան (7-14) ընթացքին Երեւանի մէջ պիտի կայանայ «Ոսկե Ծիրան» շարժանկարի միջազգային փառատօնը: Բացման արարողութեան կարմիր գորգը պիտի չի փոփոխուի: Կարմիր գորգը պիտի փոխարինեն արուեստագէտ Դաւիթ Քոչունցի ձեւաւորման հիմնան վրայ, տեղացի գորգագործ վարպետներու ձեռքերով պատ-

րաստուած գորգերը: Որոշումը կայացուած է նկատի ունենալով հայկական գորգագործութեան հարուստ պատմութիւնն ու աւանդութիւնը: Այս փոփոխութեան ընդառուա՞ջ՝ «Արարատ» Թանգարանը կազմակերպեց Դաւիթ Քոչունցի գորգագործական աշխատանքներու ցացադրութիւնը, զոր համադրած էր Նայիրի Խաչատուրեանը:

### Պոլսահայ «Յանկարծ» Թատերախումբը Եզրափակեց Իր Ներկայացումները Հայաստանի Սեջ



Պոլսահայ «Յանկարծ» Թատերախումբի շրջագայութիւնը մօտեցաւ իր աւարտին: Ուրիշամ Սարոյեանի «Իմ սիրտը լեռնագաւառն է» (Իմ Սիրտը Լեռներում է) անունով Թատերախումբը: Իսթանպուլեան բեմերուն վրայ թրքերէնով ներկայացուել է ետք արեւմտահայերէնի թարգմանուած տարբերակով, յանձնուեցաւ Հայաստանցի Թատերասերներու դատին:

«Յանկարծ»-ի անդամները՝ 24 Յունիսին, Վանաձորի, իսկ 26 Յունիսին Երեւանի Գ. Սունդուկեանի անուան ակադեմիական թատրոնի մէջ, հանդէս եկան, մեծ ընդունելութիւն գտնելով հայաստանցի մշակութասէրներու կողմէ: Ուշագրաւ է որ Սունդուկեանի բեմին վրայ ելոյթ թին, ներկաներուն միջեւ կը գտնուէր նաեւ հայաստանցի տաղանդաւոր դերասան Արամ Կոստանեանը: Ան ծանօթ անուն է եւ տարիներ շարունակ մեծ ծառայութիւն բերաւ պոլսահայ մշակութային կեանքին: Ան ներկայիս հանդէս կու գայ Երեւանի Մայր Թատրոնի խումբին մէջ:

Խումբը՝ Հայաստանեան ներկայացումներու շարքը կը պարտի «Եւրասիա» Համագործակցութեան Հիմնադրամին, որ յատուկ դրամաշնորհ յատկացուցած էր այս ձեռնարկին հմար: 30 Յունիսին կայացաւ վերջին ներկայացումը, դարձեալ մայրաքաղաք Երեւանի մէջ, «Նորարատ Փոր-

ձառական Արուեստի Կեդրոն»էն ներս: Նախ բեմադրուեցաւ խաղը, յետոյ սարքուեցաւ հրապարակային ասուլիս մը, որուն մասնակցեցան թէ լրագրողները եւ թէ ներկաներէն շատեր:

Խումբի անդամները խօսեցան «Յանկարծ»-ի կազմութեան, Թատերախումբի անուան ընտրութեան, ինչպէս ծրագրեցին եւ իրականացուցին «Իմ Սիրտը Լեռնագաւառն է» թատերախումբի ներկայացումները: Նաեւ Ռուբեր Հատտէճեանի մասին որովհետեւ անոր թարգմանութիւնն էր: Ասուլիսը առիթ հանդիսացաւ որ «Յանկարծ»-ի անդամները խօսին նաեւ պոլսահայ համայնքի, պոլսահայ թատրոնի մասին, յատկապէս շեշտը դնելով Օսմանեան շրջանի թատրոնին մէջ հայերու ունեցած առանցքային դերին վրայ, եւ այլն:

Թատերախումբի անդամ եւ գրական խորհրդատու Արթուր Կէպէնլիօղլու իր տպաւորութիւնները յայտնելու ատեն ըսաւ. «...մեր բուն նպատակն է ներկայացնել արեւմտահայերէնը: Անդրադարձանք նաեւ արեւմտահայերէնի պաշտպանութեան, ըսինք որ մտավախութիւն ունէինք որ արեւմտահայերէնը կրնար հասկնալի չըլլալ հայաստանեան հանդիսատեսին: Բայց՝ շատ լաւ արձագանգ գտան մեր ելոյթները, հանդիսականներու երեք ներկայացումներէն ալ շատ գոհ մնացին» ըսաւ Արթուրը:

### Նիտերլանտներու եւ Պելճիքայի Հայ Գամբար



Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գերշտ Տ. Խաթակ արքեպիսկոպոս Պարսամեանի առաջնորդութեամբ՝ Յունիս 21-23, 2024թ. առաջին անգամ, Նիտերլանտներու եւ Պելճիքայի մէջ գտնուող եկեղեցական համայնքներուն աշխատանքով ի մի բերուած 10-17 տարեկան հարիւր երախաներու եւ պատանիներու համար, տեղի ունեցաւ Հայ Ճամբարի ծրագիրը: Ճամբարի կազմակերպչական աշխատանքները իրականացման համար Գերշ. Տգ Խաթակ Սրբազան Հօր անօրէնութեամբ նշանակուած էր յանձնախումբ մը որը կը գլխաւորէր՝ Բրշ. Սերժ Սրկ. Տէմիրպաճագ քովը ունենալով այլ համայնքներէն մասնակցող եկեղեցանուէր անձինք եւ Հոգեշնորհ ու Արժանապատիւ Հայրեր:

Հայ Ճամբարը իրականացնելու համար նախապէս որոշուած էր տարբեր Քրիստոնէական համայնքներու ամառնային արձակուրդներ եւ ճամբարական ծրագիրներ իրականացնելու նպատակաւ գործող, Christelijke Vakantie en Conferentiecentrum De Kroeze Danne կեդրոնը որը կը գտնուի Նիտերլանտներու Տելտեն գիւղաքաղաքի մէջ:

Ուրբաթ, 21 Յունիս 2024թ. երեկոյեան ժամը 17:00-ին երախաները եւ պատանիները իրենց ծնողներու եւ Հոգեւոր հովիւներու գլխաւորութեամբ մուտք գործեցին ճամբար: Մասնակիցներուն համար նախատեսուած սենեակներ տեղաւորելէ ետք հաւաքուեցան սրահը որպէսզի ծանօթանան Գերշ. Տ. Խաթակ Սրբազան Հօր, Հոգեւոր հովիւներուն եւ ճամբարի յանձնախումբի անդամներու ինչպէս նաեւ իրարու հետ: Ապա, յաջորդեց ծանօթացում ճամբարի կանոններու եւ ծրագիրին հետ: Յետ բացատրութեանց բոլորը ուղղուեցին դէպի ճաշարան ընթրիքի, որը սկսուեց աղօթքով: Ընթրիքէն ետք գիշերային աղօթքը կատարուեցաւ:

Յաջորդ առաւօտ բոլոր մաս-

նակիցները արթնացան առաւօտեան ժամը 8:00-ին նախաճաշելու եւ առաւօտեան աղօթքի մասնակցելու համար: Աղօթքէն ետք, մասնակիցները երկու տարիքային խումբին բաժնուեցան Հոգեւոր եւ մշակութային ծրագիրներու մասնակցելու համար: Բացի դաստիարակչական ծրագիրներու, նախատեսուած էին նաեւ զանազան զբոսայգիներ՝ պար, լող, ոտնազնդակ եւ այլ խաղեր: Երեկոյեան ժամերուն ընթրիքէ առաջ տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւն: Ժամերգութեան ընթացքին երիտասարդներն ու երեխաները այդ օրը իրենց կողմէ պատրաստուած աղօթքները ընդերցեցին: Ընթրիքէն ետք երախաները երկու խումբի բաժնուեցան՝ երաժշտական երեկոյի եւ ոտնազնդակի խաղը դիտելու համար:

Կիրակի առաւօտ ճամբարի մեծ սրահի մէջ Խաթակ Սրբազան ճամբարի բոլոր մասնակիցներու ներկայութեան Սուրբ Պատարագ մատուց ընթերականութեամբ՝ Հոգշ. Տ. Մարգարիտ Աբղ. Պէսիսիգեանի: Խաթակ Սրբազան իր Հոգեւոր պատգամին մէջ ներկաներուն յիշեցուց Պենտեկոստէի դէպքը ըսելով «Քիչ առաջ Գործք Առաքելոց 2:1-3 ի ընթերցման ժամանակ լսեցինք որ Քրիստոսի աշակերտները հաւաքուած էին վերնատան մէջ միասին եւ միասիրտ ենք եւ միատեղ կ'աղօթեանք: Վերնատան մէջ Սուրբ Հոգին կրակի լեզուներու նմանութեամբ իջաւ առաքեալներու վրայ եւ անոնք Սուրբ Հոգով լեցուեցան եւ զգացին Աստուծոյ ներկայութիւնը իրենց մէջ: Այդ պարզ ձկնորս մարդիկ աշխարհը փոխեցին»:

Վերջաւորութեան Սրբազան Հայրը իր գնահատանքը եւ շնորհակալութիւնը յայտնեց Սէրժ Տէմիրպաճակի գլխաւորութեամբ Հայ Ճամբարի խորհուրդի անդամներուն ու կամաւորներուն:

Նոր Գիրք  
Հայ Քրիստոնէական  
Ճարտարապետութիւնը եւ  
Նախաքրիստոնէական  
Ներգործութիւնը  
Յեղինակ՝  
Աշոտ Հայկազուն  
Գրիգորեան  
Հրատարակութիւն  
Հ. Բ. Ը. Միութեան  
Վահրամ Ապտալեան  
Սշակութախյն  
հիմնադրամի, 438 էջ,  
«Չանգակ» տպարան,  
Հայաստան

ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ  
ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

### Ինչու Մարեց «Սրբազան Շուուն»

Շարունակուած էջ 2-էն

մի օրօք գործած ընտրական (եւ ոչ միայն ընտրական) բարքերը՝ «ինչքան ուզես՝ հղքան էլ խփեմ»-ը, դէպի իշխանութիւն տանող ճանապարհն էլ նախկինի պէս անցնի ոչ թէ ընտրատեղամասերի, այլ՝ «միայն Մելիք-Աղամեան փողոցով»։ Այդ ժամանակ, այո, համաժողովրդական ինքնաբուխ կոնսուլիդացիան՝ վերացնելու նախկինների օրօք գործած եւ վերադարձած արատաւոր բարքերը, անխուսափելի կը դառնայ եւ այդ կոնսուլիդացիան առաջնորդելը կը դառնայ ընդամենը տեխնիկայի հարց, էական չէ՝ վազգէն (Բագրատ) Գալստանի, թէ՞ Գալուստ Բագրատեանի տեսքով։

Ահա, այս պարզ ճշմարտութիւնն է, որ ի վիճակի չեն մարսել մինչեւ այժմ տեղի ունեցած շարժում-շողունների քաղաքական շահառուները։ Այդ պատճառով էլ նրանք կուսակցական իրենց գրասենեակներում նստած կամ էլ այլ պետութիւնում գտնուող գրասենեակների հետ համատեղ շարունակում են ձեռնարկել ոչ աղեկուատ, սուբելիտիւ առաջարկ՝ ՀՀ-ում իշխանափոխութեան անհրաժեշտութեան մասին եւ փորձում այդ արհեստական՝ փոքրամասնութեան կողմից աջակցուող առաջարկը պարտադրել մեծամասնութեանը։ Եւ ամէն հերթական՝ ռազմահայրենասիրական փորձի ժամանակ որպէս պատասխան ստանում են հասարակութեան լայն շերտերի կտրուկ «ոչ»-ը, քանի որ իշխանափոխութեան հանրային պահանջարկը համահունչ ու ներդաշնակ չէ իշխանափոխութիւն նախաձեռնողների առաջարկին («ցանկութիւն»-ը եւ «կարիքը» տարբեր հասկացութիւններ են, որոնց սահմանումներն էլ փորձում են լողոզել իշխանագավթման շահառուները)։ Եւ եթէ անգամ կայ այդպիսի պահանջարկ, ապա այն բաւարարելու միջոց որպէս, ինչպէս արդէն ասուեց, դիտարկուած է Սահմանադրութեամբ նախատեսուած գործիքը՝ օրէնքով սահմանուած կարգով եւ ժամկէտում։

Ահա, թէ ինչու է ընդդիմութիւնը ամէն կերպ խուսափում արտահերթ ընտրութիւններ պահանջելուց, քանի որ ընտրութիւնների գործիքը, որպէս ժողովրդի կամքը վերարտադրող երաշխաւորուած՝ ճշգրիտ ու անխարդախ գործիք, չի երաշխաւորում իշխանափոխութիւն պահանջող սուբելիտների ձեռնարկած առաջարկի բաւարարումը՝ «Նիկոլը հեռանայ, մենք գանք, իշխանութիւնը նորից անորոշ ժամկէտով զաւթենք ու երկիրը...» «շողունի բերենք»։

Հետեւապէս, աշնանը փողոցային պայքարը վերսկսուելու, նոր դէմքերով հանդէս գալու պլաններ ունեցողները մեծ հաւանականութեամբ արձանագրելու են նոյն արդիւնքը՝ եթէ որոշեն նորից կանգնել նոյն «փոցիսի վրայ»՝ պահանջելով իշխանութեան հեռացումը։ Ինչ դէմքով էլ նոր կամ նորացուած շարժումը հանդէս գայ, ինչ փաթեթաւորմամբ էլ մատուցի «Նիկոլին տուն ուղարկելու» օրակարգը, այն չի ունենալու հանրային աջակցութիւն։ (Դէ իսկ խորհրդարանում վարչապետին անվտանգութիւն յայտնելու գործընթաց սկսելն անիմաստ է՝ ուժերի յարաբերակցութիւնը հաշուի առնելով)։ Դեմոկրատական երկրներում, ինչպէս փորձն է ցոյց տալիս, փողոցային պայքարի գործիքը մեծ մասամբ օգտագործուած է իշխանութեան կողմից իրականացուող այս կամ այն ռեֆորմին, այս կամ այն նախաձեռնութեանն (օրէնքի նախագիծ, որոշում եւ այլն) ընդդիմանալու, այն չեղարկելու եւ կամ լաւարկելու նպատակով։ (ՀՀ-ում նոյնպէս այդպիսի օրակարգերով ցոյցերի յաջողուած եւ անյաջող փորձերի ենք ականատես եղել)։ Իսկ ահա իշխանութեան փոփոխութեան հարցը որոշուած է յատուկ խցիկներում՝ քուէաթերթիկների միջոցով։

«The Show Must Go On (շոուն պէտք է շարունակուի), բայց ոչ թէ քաղաքական թատերաբեմում, այլ՝ դրա համար նախատեսուած վայրերում՝ թատրոններում եւ համերգասրահներում։

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

### Ապարդիւն Հանգաւ Հերթական Դաւադրութիւնը

Շարունակուած էջ 11-էն

Դաշնակցութիւնը այսօր ալ առհասարակ տհաս եւ զաղափարագուրկ ընդդիմադիր ջոկատի մէջ կը յաւակնի գլխաւոր դերակատար դառնալու։ Իսկ այդ յաւակնութեան ետին ի՞նչ կը խոստանայ հայութեան։ Յաւալի է որ այս հարցումը ցարդ չէ ունեցած յստակ պատասխան մը, բացի իշխանափոխութենէ։

Քաղաքակիրթ աշխարհի մէջ իշխանափոխութեան հրամայականը արդար ընտրութիւններով ժողովուրդի ձայներու մեծամասնութեան տիրանալն է։ Այդ հաւանականութիւնը անկարելի նկատողներն են, որ կ'ուզեն իշխանափոխութիւն կատարել փողոցային ցոյցերով։ Անշուշտ որ փողոցը կամ քաղաքի հրապարակները հասարակութեան ընդվզումը, դժգոհութիւնը կամ բողոքը յայտնելու համար բոլորովին օրինական վայրեր են։ Այդ ցոյցերու պատճառակրնայ խանգարուիլ նաեւ քաղաքի բնականոն կեանքը։ Ճանապարհներ-

ը կրնան խցանուիլ, երթեւեկութեան մէջ դժուարութիւններ գոյանալ։ Բայց յստակօրէն ընդգծենք թէ այս բոլորը ընդունելի ու տանելի երեւոյթներ են։ Մինչեւ 12 Յունիս իշխանութիւնները, մասնաւոր ալ ոստիկանութիւնը որոշ զսպուածութիւն պահեց այդ ցոյցերու ընթացքին։ Իսկ 12 Յունիսին Գալստանեանի հրահրած ամբողջ դիմեց անընդունելի արարքին, որն էր ներխուժել Ազգային ժողովի դահլիճը։

Քանի մը տարի առաջ նման դէպք մը պատահած էր ԱՄՆ-ի մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ։ Հոն ալ Թրամբի կողմնակիցները չհանդուրժելով ընտրութիւններուն բերած պարտութեան դիմած էին նման անօրինութեան։ Այդ օր ամերիկացի ոստիկաններու ըրածը նոյնն էր ինչ որ Երեւանի ոստիկանութեան 12 Յունիսին միջամտելու պահուն գործադրած կանխամիջոցները։

Այդ մէկը սաղրանք մըն էր, որ կը նպատակադրէր քանի մը տասնեակ զոհեր ապահովել վար-

### Գրիգոր Զօհրապ

Շարունակուած էջ 12-էն

տաս գողտր քերթուածներ են անոնք, որոնցմէ շատերը ոչ միայն ցոյց կու տան չափածոյին նկատմամբ նորավիպագիրին հմտութիւնը, այլեւ անոնցմէ շատերուն մէջ անոր կնամեծարութեան պատկերաւոր շեշտադրումները. ըմբռնանք «Տարակոյս» քերթուածը։

Տանթլնետի փոփոխումը կը մտնու  
Երերալով՝ նաու մը պէս, ալեհերձ.

Աչքերու մէջ ցանկութիւններ կը գտնու,  
Ու կը հրճուիս կնկան մը պէս այլամերձ։

Մատուցումի մը պէս կարծես կը ծփան  
Կոհակաւետ մարմնիդ բոլոր գիծերը,  
Ծրփանքով մը օձագալար, խօլակամ,  
Եւ կը գմայլիս ապշած՝ տղան եւ ծերը։

Ամէն այրերն յորձանքիդ մէջ կը դառնան,  
Ու կը փոխուիս խելօքներն ալ՝ խեղդերու.  
Սուրբերն անգամ իսկոյն վրադ աչք կը բառնան,-  
Հոսանքն ես դուն սարսուռներու, տեղներու։

Ըսէ՛ շիտակ, թէ սիրեցիր քիչ մը զիս,  
Ո՛վ հասուն կից, որ խոնքէնքը մարմնիդ մէջ՝  
Տարիներուն դէմը կ'ելլես կ'ընդվզիս,  
Զինածաղի՞կ արդեօք՝ կամ Հունրն ես անշէջ։

Հուշակ է շահած Զօհրապի մէկ ճառը Օսմանեան խորհրդարանին մէջ՝ ի պաշտպանութիւն կիրներուն։ Կը մէջբերեմ որոշ տողեր միայն. «... ձիշդ է, որ ա՛յրն է կնոջ վրայ հսկողը, բայց պատշաճ կ'ըլլայ որ ատանկ պարագաներուն քիչ մը մեղմ վերաբերում ցոյց տանք կիրներուն հանդէպ, մտածելով որ այս ժողովը միմիայն այրերէ բաղկացած է եւ կիրներ չեն մասնակցիր անոր։ Կ'ըսեն թէ շնութեան պարագային պատասխանատուութիւնը կնոջ վրայ կը ծանրանայ։ Ես ամէնէն մեծ յանցանքը այր մարդուն քով կը գտնեմ, նո՛յնիսկ ընկերային արդի պայմաններուն

մէջ...», վասնզի այրերը շատ աւելի դիւրութիւններ ունին՝ քան կիրները՝ իրենց ուզածնին պէս ապրելու...։ Կ'ըսէք նաեւ, թէ կնոջ անհաւատարմութիւնը սերունդին խաթարուելուն պատճառ կ'ըլլայ՝ ապօրինի ծնունդներ առաջ բերելով։ Ինծի համար այս տեսակ բան մը նշանակութիւն չունի, ապօրինի ծնունդի տեսակէտ չեմ ընդունիր։ Միջին դարուն էր որ ազնուականութիւնը նշանակութիւն մը ունէր. «Ես այնինչ ազնուականին գաւակն եմ» կ'ըսէին։ Ի պատիւ 20-րդ դարուն՝ պէտք է խստիւ մերժել այս տեսակ բան մը։ Ազնուականութիւն չկա՛յ։ Սահմանադրութիւնը բոլոր օսմանցիները հաւասար կը նկատէ։ Երբ նորածին մը դժբախտութիւնը ունեցած է մասնաւոր ծնողքէ մը զուրկ ըլլալու, վայել է որ զայն օսմանցիութեան փառքէն զուրկ պահենք, երբ, ընդհակառակն ամբողջ Օսմանեան ազգը պարտականութիւնը ունի այդ նորածինին ծնողքը ըլլալու։ Ո՛րեւէ օսմանցի երբ անծանօթ ծնողքի մըն ալ գաւակ ըլլայ, աշխարհ եկած օրէն հաւասար է օրինաւոր ծնողներու բոլոր գաւակներուն հետ...»։

Ընտանեկան, բարոյական, դաստիարակչական հարցեր, գորս բարձրացուցած է Գրիգոր Զօհրապ Օսմանեան խորհրդարանէն ներս աւելի քան հարիւր տարի առաջ։ Այր մարդու եւ կնկայ միջեւ իրաւունքներու հաւասարութեան կամ անհաւասարութեան շուրջ բոլուն վիճաբանութեանց տեղիք տուող խնդիրները, քննարկումները ցայսօր ալ կը շարունակուին՝ առանց ունենալու արդար լուծում։

Բայց, այս բոլորէն վեր ու անջատ, Գրիգոր Զօհրապ հաստատապէս կը մնայ այն գեղարուեստագէտը, Տիլթթընիթը, որուն մտաւոր ու բանաւոր ուժերուն հանգումն է ետք, իր «եղբայրներ»ուն ձեռամբ գագանօրէն յօշոտուելէ յետոյ, իր կենսասէր կեանքի Երզրին հարուստ երանգապնակ եղերականօրէն կոտրելէն ետք միայն, մեր ժողովուրդն ալ զգաց արժէքը կորսուած իր մեծ գրագէտին, որ միացաւ մահուան կարաւանին իր եղբունահար գրչեղբայրներուն՝ Սիւսմանթոյին, Դանիէլ վարուժանին, Ռուբէն Սեւակին, Ռուբէն Զարարեանին, Երուխանին, Թլկատինցիին եւ միւս բիւրաւոր նահատակներուն...։

«Աղթամար»-«Ծաղիկ»

կաբեկելու համար գործող իշխանութիւնը։

Ազգային բարեբախտութիւն է, որ այդ սաղրանքը չէ հասած իր հետապնդած նպատակին։  
Վերեւ նշած էինք բեմի ետին գործող դերակատարներուն։ Այդ դերակատարներու ազդեցութեան գօտին կը գերազանցէ երկրի սահմանները եւ դուրսէն կը ստանայ շատ յստակ գորակցութիւն։ Պարզ է թէ նախկիններու վերադարձը ամենամեծ ուրախութիւնը պիտի պատճառէ ոչ այժմ Քրեմլինի ղեկին նստողներուն։

Զեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
Massis2@earthlink.net (626) 797-7680

### Եւրո-2024. Սպանիան Գերագանցելով Վրաստանին Յասաւ Քառորդ Եզրափակիչ



Ֆուտպոլի Եւրոպայի առաջնութեան 1/8 եզրափակիչին իրարու դէմ մրցեցան Սպանիան եւ Վրաստանը:  
Քլոնի մէջ կատարուած խաղի մեկնարկին, բացայայտ առաւելութիւն ունէր Սպանիոյ ընտրանին, որ իրարու ետեւէ գրոհներ կը կազմակերպէր: Սակայն խաղի 18-րդ վայրկեանին Վրաստանի արագ հակադրոհի ժամանակ սպանացիներու կազմէն ինքնակոլի հեղինակ դարձաւ Լէ Նորմանդը:  
Երկրորդ կէսին սպանացիները շարունակեցին տիրել գնդակին եւ կարողացան եւս 3 գնդակ ուղարկել վրացիներու դարպասը:  
Եւրոպայի առաջնութեան քառորդ եզրափակիչին Սպանիայի մրցակիցը Գերմանիան է: Այդ խաղը կը կայանայ Յուլիս 5-ին:

### Անգլիան Յասաւ Քառորդ Եզրափակիչ

Ֆուտպոլի Եւրոպայի առաջնութեան 1/8 եզրափակիչին Անգլիան յաջորդ փուլի ուղեգրի համար մրցեցաւ Սլովակիայի հետ:  
Սլովակիան կարողացաւ նշանակել առաջին կոլը:  
Երկրորդ կէսը կը տիրապետէին ամբողջ խաղին եւ աւելացուած վերջին վայրկեանին գրաւելով Սլովակիայի բերդը կարողացան հաւասարեցնել արդիւնքը:  
Լրացուցիչ ժամանակի 2-րդ վայրկեանին Հէրի Քեյնը նշանակեց Անգլիոյ յաղթանակի կոլը:  
Քառորդ եզրափակիչին Անգլիոյ մրցակիցը պիտի ըլլայ Զուիցերիան, որ 1/8 եզրափակիչին պայքարէն դուրս մղեց Իտալիան: Այդ հանդիպումը կը կայանայ Յուլիս 6-ին:

### Գերմանիան Յասաւ Քառորդ Եզրափակիչ

Ֆուտպոլի Եւրոպայի առաջնութեան 1/8 եզրափակիչի շրջանակներուն Գերմանիան մրցեցաւ Դանիայի հետ:  
Տրիթմոնտի մէջ կայացած խաղի առաջին կէսի 35-րդ վայրկեանին մրցավարը՝ ամպրոպի պատճառով, դադարեցուց խաղը: Հանդիպումը վերսկսաւ 20 վայրկեան ետք: Առաջին կէսին այդպէս ալ կոլ չարձանագրուեցաւ:  
Երկրորդ կէսին գերմանացիք երկու կոլ նշանակելով ապահովեցին իրենց տեղը քառորդ եզրափակիչին:

### Չիլի, ԱՄՆ եւ Մեքսիք Ըլլալով Դուրս Մնացին Ամերիկայի Գաւաթի Փլեյ-Օֆֆ-Էն



Ֆուտպոլի Չիլիի հաւաքականը 20 տարուան մէջ առաջին անգամ չկարողացաւ հասնիլ Ամերիկայի գաւաթի քառորդ եզրափակիչ՝ խմբային փուլի երեք խաղերու ընթացքին վաստակելով 2 կէս:  
Դուրս մնացին նաեւ ԱՄՆ-ի եւ Մեքսիքի հաւաքականները:  
Առաջին անգամ քառորդ եզրափակիչ հասաւ Գանատան, որը 4 կէսով երկրորդն է: Աշխարհի ախոյեան Արժանիան երեք յաղթանակ տարած է:

### Հ.Մ.Մ.ի Սահարա Ֆութպոլի Խումբը Բաժակակիր



Կիրակի, 30 Յունիս, 2024-ին, առաւօտեան ժամը 10:00ին Լոս Անճելոսի Grifit Park-ի դաշտին վրայ աւարտական խաղին Հ.Մ.Մ.ի «Սահարա» խումբը մրցեցաւ «Celtic FC» խումբին դէմ:  
Հ.Մ.Մ.ի «Սահարա» բուն պայքար մղեց յաղթանակի համար, սակայն խաղը աւարտեցաւ 1-1 հաւասար արդիւնքով:  
Դիմուեցաւ 11 մեթրանոցներու, որուն ընթացքին (penalty) Հ.Մ.Մ. փայլուն հասաւ յաղթանակի՝ 2-1 արդիւնքով եւ տիրացաւ Los Angeles Municipal League soccer-ի ախոյեանութեան բաժակին:  
Յաջորդ եղանակին Հ.Մ.Մ.ի «Սահարա» իրաւունք պիտի ունենայ հանդէս գալու Metro Լիկայի առաջին դասակարգին մէջ:  
Վարձքերնիդ կատար Հ.Մ.Մ. Սահարա խումբի մարզիկներ եւ պատասխանատուներ:  
Բոլորին կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:

### Պատանեկան Եւ Հայաստանը Երկրորդն Է Խմբային Պայքարին Մէջ



Պոսնիա եւ Հերցեգովինայի մայրաքաղաք Սարաեւոյի մէջ աւարտած բռնցքամարտի Եւրոպայի պատանեկան առաջնութեան Հայաստանի հաւաքականը 3 ոսկէ, 6 արծաթէ եւ 1 պրոնզէ մետալով խմբային պայքարին երկրորդն է 38 երկիրներու մէջ:  
Տղաներու մրցաշարին Հայաստանի 13 մասակիցներէն 8-ը դարձած է մետալակիր: Աղջիկներու պայքարին Հայաստանի 4 մարզուհիներէն երկուսը նուաճեցին մետալ:

### Որակապէս Այսպիսի Ուժեղ Խումբ Երբեք Ողիմպիական Խաղերու Չենք Ուղարկել. Կարէն Գիլոյեան

Հայաստանի ողիմպիական հաւաքականը թէպէտ մեծաթիւ է, սակայն որակապէս ուժեղ խումբ է:  
«Արմէնպրես»-ի հետ գրոյցի ընթացքին նման կարծիք յայտնեց Հայաստանի Հանրապետութեան կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարէն Գիլոյեանը:  
«Որակապէս այսպիսի ուժեղ խումբ երբեք Ողիմպիական Խաղերու չենք ուղարկած: Այո, մասնակիցներու թիւը քիչ է, բայց որակը շատ բարձր է: Մենք, վստահաբար, կ'երթանք մետալներ նուաճելու: Ամէն ինչ կը վկայեն, որ մարզիկները պէտք է լաւ ելոյթ ունենան», - ըսաւ Գիլոյեանը:  
Վերջինս շեշտեց, որ նման եզրահանգման եկած է վերջին տարիներուն միջազգային ասպարէզին մէջ հայ մարզիկներու զբանցած արդիւնքներու հիման վրայ: Ըստ Կարէն Գիլոյեանի՝ մետալային յաւակնութիւններ ունի առնուազն 10 մասնակից:  
Մինչ այս Փարիզ-2024-ի ուղեգիր ապահոված է 14 մարզիկ:

